

ՀԱԶԱՐԱԽՈՐ ՀԱԼԵՊՈՂԱՅԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԱԿԱԸ՝ Ի ՆՊԱՍՏ ԱԶԳԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԺԻՐԱՅՐ ԲԷԻՍԵԱՆԻ ԵՒ ԻՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՅԱՆԿԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՆ



Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գեորգ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, կազմակերպութեամբ Երեսփոխանական Ընտրութիւններու Կեդրոնական Յանձնախումբին, Երեքշաբթի, 14 Յուլիս 2020-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Ազգային Զարեմ Եփփէ Ճեմարանի շրջափակին մէջ տեղի ունեցաւ ժողովրդային և-



ԿՈՉ

Կիրակի, 19 Յուլիս 2020-ին տեղի ունեցաւ Սուրիոյ խորհրդարանական ընտրութիւններու թեկնածուներուն շուրջ հալէպահայ համայնքապետներու խորհրդակցութիւններուն արդիւնքով որոշուեցաւ խորհրդարանական ընտրութիւններու ազգի թեկնածուն՝ յանձնին տիար

Ժիրայր Բեիսեանի,

որուն պիտի զօրակցինք միասնական ճիգերով, աշխոյժ մասնակցութիւն բերելով ընտրութեան աշխատանքներուն եւ անվարան ուղղուելով դէպի քուէտուով:

Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գեորգ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան Բերիոյ Թեմի Կաթողիկէ Հայոց Առաջնորդ Արիի. Տէր Պետրոս Արք. Սիրիայեան Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքապետ Կերպաստուելի Յարութիւն Սելիմեան



խընտրական հաւաք մը:
 ՀԱԸՄ-ի փողերախումբը ազգային երգերով դիմաւորեց հրակիրեալները, ապա սուրիական քայլերգով հանդիսութեան մեկնարկը կատարեց: Հաւաքին սրբազան հօր կողքին ներկայ էին՝ Հայ Կաթողիկէ Համայնքի պետ **Լուսին Ապաճեան-ՉիլԱբօշեան**
 Ըար.՝ 12 5 ➤

Խմբագրական

ԱՏՐՊԵՅՃԱՆՆ ՈՒ ԹՈՒՐՔԻԱՆ ՍՊԱՌԱԼԻՔ ՏԱՐԱԾԱՇՐՉԱՆԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

Ատրպեյճանական ուժեր շաբթուան սկիզբը փորձեցին Յայաստանի հիւսիսարեւելեան սահմաններ ներթափանցել, առանց պատրուակի անգամ: Անոնք կրկին ձախողեցան, զոհեր տուին, պատճառ դառնալով տարածաշրջանի լարուածութեան սրումին: Աւելին. ռմբակոծեցին հայկական սահմանային գիւղերու, քաղաքներու խաղաղ բնակչութիւնը եւ եռօրեայ բախումներ ունենալով, հայկական կողմին համապատասխան պատասխանին ալ արժանանալով, իրենց երկրէն ներս խլրտումներու դուռ բացին:

Ատրպեյճանի յարձակողապաշտ քաղաքականութեան ի տես, շարք մը պետութիւններ երկկողմանի հանդարտութեան կոչեր ուղղեցին Յայաստանին եւ Ատրպեյճանին, բացի Թուրքիայէն, որ լարուածութեան մագլցումը հրահրելու նկրտումներով Յայաստանի Յանրապետութեան վրայ Ատրպեյճանի շղթայագերծած յարձակումին ամբողջական իր աջակցութիւնը յայտնող հրապարակային յայտարարութիւններով հանդէս եկաւ, լարուածութիւնը սրելու նախանշաններ տալով Ատրպեյճանին՝ հակառակ պսակածէ ժահրի համաճարակին ու առնուազն 90 օրով համաշխարհային զինադադարը դադարեցնելու ՄԱԿ-ի Ապահովութեան հորինուողի անցեալ շաբթուան որոշումին:

Թուրքիա եւ Ատրպեյճան միջազգային միջնորդութիւնը արհամարհելու եւ բանակցային հոլովոյթները խանգարելու միտելոյն քաղաքականութիւնը կը վարեն:

Այս կը փաստեն Ատրպեյճանի նախագահ Իլիհամ Ալիեւի կողմէ միջազգային միջնորդութիւնը, մասնաւորաբար ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի ջանքերն ու Յայաստանի հետ ընթացող բանակցային հոլովոյթը իմաստագուրկ համարելը, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի, յատկապէս Սուրիոյ մէջ Թուրքիոյ սանձարձակ, բանակցութիւններու տրամաբանութիւնը եւ դրացի երկիրներու ինքնիշխանութիւնն ու տարածքային ամբողջականութիւնը չյարգող ընթացքը: Սուրիոյ մէջ Թուրքիան իր բռնագրաւած տարածքներուն մէջ սկսած է կիրարկել թրջացման քաղաքականութիւնն անգամ:

Իսկ ինչո՞ւ այս պահուն ընտրութիւնը: Սուրիական տագնապի սրման առաջին օրերէն իսկ, քաղաքական վերլուծաբաններ կը յայտնէին, թէ Միջին Արեւելքի մէջ Թուրքիոյ ոտնձգութիւնները պիտի շարունակուին ու հասնին Կովկաս:

Այս ժամկետը, բնականաբար, ցոյց կու տայ, որ Թուրքիան Միջին Արեւելքի եւ Լիպիոյ մէջ իր բացած բախումային ճակատներով չբաւարարուելով, կը փորձէ բռնկեցնել նաեւ Կովկասեան ճակատը, որոշակի ճնշում բանեցնելու Ռուսիոյ եւ Իրանի վրայ եւ ուղերձներ յղելու այդ մեծ պետութիւններուն, որպէսզի «հանգիստ» ձգեն զինք իր ծաւալապաշտ ախորժակներու բաւարարման ընթացքին մէջ:

Այնպէս որ հաւանական է, որ Կովկասեան տարածաշրջանին մէջ Ատրպեյճանին զօրակցելու Թուրքիոյ նկրտումները շարունակուին ու ատրպեյճանական յարձակողապաշտ նկրտումները հասնին նաեւ Իրան, բռնկուն պահելու այդ շրջանը եւս:

Իսկ միթէ՞ յստակ չեն Թուրքիոյ նպատակները Միջին Արեւելքի թէ Կովկասեան ճակատներուն վրայ:

Վերջնականապէս կորսնցնելով Եւրոպական Միութեան մաս կազմելու իր փայփայած յոյսերը, Թուրքիոյ ներկայ նախագահը իր ողջ ուժը կեդրոնացուցած է պատմական իր երագին՝ Օսմանեան կայսրութեան պատմական տարածքներուն վերատիրանալու քաղաքականութեան վրայ, օգտագործելով այդ օրերու մտայնութիւնն ու վայրագութեան, անօրէնութեան դրսեւորումները, մոռնալով, որ ո՛չ արաբ ժողովուրդը, ո՛չ ալ Կովկասի իսլամական հանրապետութիւններու մէջ ապրող ժողովուրդները Թուրքիոյ նախագահին երագներուն գոհացում տալով իրենց անկախ գոյութիւնը կը գիշին նման տիրակալի մը: Անոնք շահերու համընկնումը ժամանակաւոր երեւոյթ է, որ կապուած է իւրաքանչիւր երկրի ներքին հարցերուն հետ:

Իսկ ի՞նչ բանի կը վստահի Թուրքիոյ նախագահը, երբ պսակածէ ժահրի, տնտեսական սուր տագնապի եւ ներքին հարցերով եռուն երկրի մը նախագահը ըլլալով մէկէ աւելի ճակատներ կը փորձէ բանալ: Ինչպիսի՞ շահերով կամ վնասներով դուրս պիտի կարենայ ելլել, եթէ կարենայ անշուշտ, այս ճակատներէն:

Թուրքիան կը վստահի պետութիւններու բախող շահերու սրումին, միտելոյն ատեն բաւարարել կը փորձէ իսրայելեան եւ ամերիկեան շահերը, Միջին Արեւելքի լարուածութիւնը պահելով ու ծաւալելով, Ռուսիան եւ Իրանը անել կացութեան մատնելու իր փորձերով: Փոխարէնը՝ ան ծաւալապաշտ իր քաղաքականութեան ուղին կը հարթէ:

Թուրքիոյ եւ Ատրպեյճանի ոտնձգութիւնները, հետեւաբար, կը սպառնան ոչ միայն Յայաստանի ու Արցախի, այլեւ արաբական ողջ աշխարհին, Իրանի եւ Ռուսիոյ ապահովութեան:

Թուրք-ատրպեյճանական գործակցութիւնը, օրհնուած Իսրայելի կողմէ նաեւ, պետք է մտահոգ վերնիշխալ բոլոր երկիրները: Անոնք գործակցաբար պետք է սանձեն տարածաշրջանին մէջ թուրք-ատրպեյճանական սաստկացող վտանգը:

«Գ.»

ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՆԸ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՉ ՈՒՂԴԵՅՑ ՄԵՐՏԵԼՈՒ ՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԼՐԱՅՈՒՅԻՉ ԲՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՐԱՎԱՆՄԱՅՆԵԼՈՒ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆԸ



Դամասկոս-ՍԱՆԱ. Երեքշաբթի 14 Յուլիսին Սուրիոյ նախագահ Պաշշար ալ Ասատ Սուրիոյ Կրթութեան Նախարարութեան կոչ ուղղեց սերտելու պաքալորիայի երկրորդ՝ լրացուցիչ քննութիւններ իրականացնելու կարելիութիւնը:

Նշենք, որ Սուրիոյ երկրորդականի Գ. Կարգի՝ պաքալորիայի աշակերտները երեքշաբթի 14 Յուլիսին յանձնեցին 2020 տարեշրջանի իրենց վերջին քննութիւնը: Քննութիւնները սկսած էին 21 Յունիսին:

ՅՅԳ ԲԻՐՈՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ «ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍ ԵՆՔ ՄԵՐ ԲՈՒՐ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՐՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ Ի ՍՊԱՍ ԳՆԵԼՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՈՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԵՒ ՉԱՐԳԱՅՈՒՄԻՆ»

Յայաստանի Յանրապետութեան եւ Արցախի Յանրապետութեան դէմ Ատրպեյճանի յարձակողապաշտ ու ռազմատենչ նկրտումներու հերթական փաստը արձանագրուեցաւ: Այս պահուն թիրախը Յայաստանի Յանրապետութեան հիւսիսարեւելեան սահմանի հատուածն է: Ինչպէս նախորդ բոլոր պարագաներուն, այս անգամ ալ անոր կ'ուղեկցի քարոզչական ապատեղեկատուութիւնը, Թուրքիոյ անմիջական աջակցութեամբ:



Առաջին իսկ պահէն ՅՅԳ աշխարհասփիւռ կառոյցը ձեռնարկեց իր բոլոր կարողութիւններով միջազգային հանրութեան ներկայացնելու՝ բանակցութիւններու փոխարէն Յայաստանին ֆիզիքական սպառնալիք ներկայացնող Ատրպեյճանի քաղաքականութիւնը, անգամ մը եւս հաստատելով որ ներխուժումն ու նախաարձակ կողմը չդատապարտելը կը խրախուսէ Ատրպեյճանը եւ հող կը նախապատրաստէ լայնամասշտապ ռազմական գործողութիւններու համար:

Այս դժուարին պահուն, Յայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր աշխարհասփիւռ կառոյցով, Յայ Դատի յանձնախումբերու եւ գրասենեակներու ցանցով, ուղեկցի միութիւններով ու համակիրներով կանգնած է հայկական գոյգ պետութեանց, հայկական բանակին կողքին: Ինչպէս միշտ, մենք պատրաստ ենք մեր բոլոր կարելիութիւններն ու կարողականութիւնը ի սպաս դնելու Յայրենիքին ու հայութեան անվտանգութեան եւ զարգացումին:

ՅՅ Դաշնակցութեան Բիւրօ
14 Յուլիս 2020

ԿՈՉ ՅԱԼԵՊԱՅԱՅՈՒԹԵԱՆ

Կիրակի, 19 Յուլիս 2020-ին, տեղի պիտի ունենան Սուրիական Յանրապետութեան խորհրդարանի 3-րդ օրէնսդրական շրջանի ընտրութիւնները:

Սուրիական քաղաքացիի մեր պարտականութիւնն է այդ օր, պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ ուղղուիլ քուէատուփի եւ կատարել մեր պարտաւորութիւնը:

Մեր ժողովուրդին ընտրութեան մասնակցութիւնը դիւրացնելու համար հաստատած ենք հետեւեալ կեդրոնները.

- Արամ Մանուկեան Ժողովրդային Տուն, Վիլլաներ
- Ս. Աստուածածին եկեղեցի, Վիլլաներ
- Ազգ. Միացեալ վարժարան, Սիւլէյմանիէ
- Ս. Երրորդութիւն (Չուարթնոնգ) եկեղեցի, Սէյրաֆի
- «Տիգրանեան» պարտէզ, Նոր Գիւղ
- ՅԱԸՄ պարտէզ, Ազիզիէ

Փափաքողները կրնան իրենց անձնաթուղթերով ներկայանալ յիշեալ կեդրոնները, որոնք պիտի ծառայեն որպէս հաւաքավայրեր, ուրկէ ինքնաշարժներով քուէարկողները պիտի փոխադրուին դէպի քուէատուփ:

Երեսփոխանական ընտրութիւններուն համաժողովրդային մեր մասնակցութիւնը լաւագոյն փաստն է Սուրիական Յայրենիքին նկատմամբ մեր հաւատարմութեան եւ անոր ծաղկումին ու հզօրացման մեր անսակարկ մասնակցութեան:

ԶՈՒԵԱՐԿԵ՛... որովհետեւ ԶՈՒԵՂ ԱԶԳԻԴ ՈՒԺՆ Ե...

Դիան
Ազգ. Առաջնորդարանի

Լուրեր Հայաշխարհին

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱՊ ԶԱՍՏԱՏԵՑՑ ԱՐՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԻՆ ՇԵՏ

«Անթիլիաս».- Այսօր երեկոյան, Վեհափառ Հայրապետը կապ հաստատեց Արցախի Հանրապետության մեծարգոյ նախագահ Արայիկ Յարութինեանի հետ: Նորին Սրբութիւնը իր մտահոգութիւնը յայտնելէ ետք ստեղծուած կացութեան, իր հայրական օրհնութիւնն ու գորակցութիւնը փոխանցեց հայոց բանակին:



ՆԱԴՂԱԼԵԱՆ. «ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԴԵՄ ՈՒՂՈՒԿԸ ՅԱՐՁԱԿՈՂԱՊԱՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԻՏԻ ՍՏԱՆԱՆ ԻՐԵՆՑ ԶԱՄԱՐԺԷՔ ԴԱՏԱՍԽԱՆԸ»



Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան մամլոյ բանբեր Աննա Նաղդալեան մեկնաբանեց Ատրպեյճանի գինուած ուժերուն կողմէ Բերդ քաղաքի ռմբակոծումը: «Ատրպեյճանական կողմը կը շարունակէ իր յարձակողապաշտ գործողութիւնները հայ-ատրպեյճանական սահմանին՝ դիտաւորեալ թիրախաւորելով քաղաքացիական

ենթակառուցուածքներն ու բնակչութիւնը եւ ընդլայնելով լարուածութեան աշխարհագրութիւնը: Այսօր հարուածային անօդաչու թռչող սարքի միջոցով հրետանակրծման ենթարկուած են Բերդ քաղաքի քաղաքացիական ենթակառուցները», նշուեցաւ հաղորդագրութեան մէջ: Ա. Նաղդալեան դիտել տուաւ, որ Հայաստանի քաղաքացիական բնակչութեան անվտանգութեան դէմ կատարուած այս յարձակողապաշտ գործողութիւնները պիտի ստանան իրենց համարժէք պատասխանը, իսկ տեղի ունեցածին ամբողջ պատասխանատուութիւնը կը կրէ ատրպեյճանական կողմը:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՏՐՊԵՅՃԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԲԱՏՈՒԿՆԵՐ

12 Յուլիսէն սկսեալ իրավիճակը սրած է հայ-ատրպեյճանական սահմանի Տաւուշի շրջանին մէջ: Ատրպեյճանցի զինուորներ ՌԻԱԶ մակնիշի ինքնաշարժով Տաւուշի ուղղութեամբ ՀՀ պետական սահմանը խախտելու փորձ կատարած են, բայց հայկական կողմի նախագգուշացումէն ետք, լքելով ինքնաշարժը, վերադարձած են իրենց դիրքերը: Աւելի ուշ անոնք կրկնած են հայկական սահմանային դիրքը գրաւելու փորձը՝ կիրառելով հրետանային կրակ, սակայն ճշուած են հայկական կողմէն եւ կորուստներ տալով՝ հեռացած: Թշնամին 13 Յուլիսէն թիրախաւորած է Լաւե բնակավայրեր, իսկ 14 Յուլիսի գիշերը Հայաստանի գինուած ուժերու մարտական դիրքերէն դիտարկուած է թշնամիի հրասայլի շարժ, որ հայկական կողմէն արձակուած կրակով կասեցուած է: Թշնամին թիրախ դարձուցած է հայկական բնակավայրերը, յատկապէս՝ Տաւուշի, Չինարի, Այգեպարի, Ներքին Կարմիրաղբիւրի, Պառաւաքարի համայնքները, Նաւե: Բերդ քաղաքը, հոն գտնուող երկու գործարաններ: Կան նիւթական վնասներ: Տարածելով Հայաստանի գինուած

ուժերու ստորաբաժանումներուն իրականացուցած գիշերային պատժիչ գործողութիւններուն տեսանկյունով՝ ՀՀ ՊՆ խօսնակ Արծրուն Յով-



հաննետեան դիմատետրի իր էջին վրայ գրած է. «13 Յուլիսը կը մտնէ պատմութեան մէջ իբրեւ հայկական արտադրութեան մարտական անօդաչու թռչող սարքերու մարտական կիրարկութեան օր: Առաջին անգամ հայկական մարտական անօդաչու թռչող սարքերը կիրարկուեցան պատերազմի ընթացքին՝ մարտական պայմաններու մէջ եւ փայլուն արդիւնքներ արձանագրեցին: Կարծես անոնց հարուածին զոհ դարձած են բարձրաստիճան գինուորականներ»:

ՀՅԴ ԵՐՐՈՂԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ԳՐԱՏԵՆԵԱԿԸ ԿԸ ՅԱՅՏԵ. «ԱՏՐՊԵՅՃԱՆ ՄՊԱՌՆԱԽԷ Է ԵՐԶԱՆԱՅԻՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹԵԱՆ»

ՀՅԴ Երրոպայի Հայ Դատի Յանձնախումբի գրասենեակը խստօրէն կը դատապարտէ ատրպեյճանական զինուած ուժերու՝ 12 Յուլիսէն ի վեր նախաձեռնած եւ տակաւին շարունակուող ռազմական սարքանքը, ներթափանցման փորձերը եւ Հայաստանի Հանրապետութեան Տաւուշի մարզին մէջ ծանր հրետանիի գործադրումը: Ատրպեյճանի իշխանութիւնները կը շարունակեն իրավիճակը սրելու եւ գինադարը խախտելու իրենց յարձակողապաշտ քաղաքականութիւնը՝ հակառակ համաճարակին եւ անցեալ շաբաթ ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդի՝ 90 օրով համընդհանուր զինադադար հաստատելու մասին ընդունած որոշման:

Այս տարուան Մայիսին Արցախի եւ Հայաստանի Հանրապետութեան սահմաններուն մօտ լայնածաւալ ռազմափորձերէն, Բերքաբեր գիւղի հրետակոծութենէն ետք, Ատրպեյճան այժմ ալ կը խախտէ Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը՝ օգտուելով պսակած ժահիրին պատճառով երկրին մէջ ստեղծուած իրավիճակէն: Դատապարտելի է նաեւ Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան յայտարարութիւնը, ուր Թուրքիա, փաստերը խեղաթիւրելով, հրապարակայնօրէն իր անվերապահ աջակցութիւնը յայտնած է Հայաստանի Հանրապետութեան դէմ ատրպեյճանական բանակի սարքիչ գործողութիւններուն: Թրքական եւ ատր-

պեյճանական իշխանութիւնները երկար տարիներէ ի վեր կը համագործակցին՝ Հայաստանը աշխարհաքաղաքականօրէն եւ տնտեսապէս մեկուսացնելու համար: Տաւօք, թրքական իշխանութիւնները ո՛չ պէ՛տք է արձանագրեն իրենց յարձակողապաշտ քաղաքականութիւնը, որ իրաւունքները խախտելու համար իրենց անցեալէն դասեր քաղելէ, այլ նաեւ աշխուժօրէն կը քաջալերեն Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներու ֆիզիքական անվտանգութեան սպառնացող ռազմական յարձակողապաշտութիւնը:

Իբրեւ երրոպական հասարակական կազմակերպութիւն՝ ՀՅԴ Երրոպայի Հայ Դատի Յանձնախումբի գրասենեակը կը կ'ուղղէ Երրոպական Միութեան, անոր հաստատութիւններուն եւ անդամ երկիրներուն խստօրէն դատապարտելու ատելութեան խօսքի տարածման եւ արցախեան տագնապին ռազմական լուծում պարտադրելու որեւէ փորձ: Անցեալ ամիսներուն ընթացքին ատրպեյճանական իշխանութիւնները եւ լրատումաբերները շարունակաբար կ'աղաւաղէին եւ կը շահարկէին Երրոպական խորհրդարանի բանաձեւերու բովանդա-



կութիւնը՝ այդպիսով փորձելով հոլ նախապատրաստել ռազմական յարձակումի համար: Ատրպեյճանի նախագահ Իլիհամ Ալիեւ բազմիցս յայտարարած է արցախեան տագնապի գինուորական լուծման կարելիութեան մասին: Հայաստեացութեան քաջալերումը արդէն տասնամեակներ շարունակ Ատրպեյճանի մէջ պետական քաղաքականութիւն եւ երկրի ներքին խնդիրներէն շեղելու միջոց է:

Մեկնաբանելով իրավիճակը՝ ՀՅԴ Երրոպայի Հայ Դատի Յանձնախումբի գրասենեակի նախագահ Գասպար Կարապետեան ըսաւ. «Ինչպէս ամբողջ աշխարհը, նոյնպէս Հայաստանը կը պայքարի համավարակին դէմ: Բացի ատկէ, այժմ ստիպուած է նաեւ կասեցնել ատրպեյճանական զինուորական յարձակումը: Տաւօք, այսօր Ատրպեյճան սպառնալիք է շրջանային անվտանգութեան համար: Եթէ Երրոպական Միութիւնը կ'ուզէ իր դրացնութեան երկիրներուն մէջ խաղաղարարի դեր կատարել, ապա պէտք է ատելութեան խօսքի դէմ յստակ միջոցներու ձեռնարկէ, այն է՝ յստակօրէն նշէ, որ Ատրպեյճանն է յարձակողը: Երրոպական Միութիւնը պէտք է նաեւ Թուրքիան ենթարկէ պատժամիջոցներու՝ այլատեսցութեան քարոզի եւ Հայաստանի՝ ինքնիշխան պետութիւն եւ Երրոպական Միութիւն գործընկեր երկրի դէմ զինուորական յարձակումներուն սատարելուն համար»:

Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութիւնը հրապարակեց նաեւ հայ-ատրպեյճանական սահմանին Ատրպեյճանի «Elbit Hermes 900» անօդաչու թռչող սարքի խոցման տեսանկյունը: Ատրպեյճանի պաշտպանութեան փոխնախարար Քարիմ Վելիեւ լրագրողներուն հետ ունեցած գրոյցին ընթացքին, 14 Յուլիսին, յայտնեց, որ սահմանային բախումներու ընթացքին ատրպեյճանական բանակը շարք մը կորուստներ ունեցած է, յատկապէս նշելով աւագ գնդապետ Փոլատ Հաշիմովի եւ գնդապետ Իլկար Միրզայեւի մասին: Վելիեւ դիտել տուաւ, որ սպանուած են նաեւ գնդապետներ Նամիգ Ահմետովը, Անար Նովրուզովը, ենթասպայ Իլկար Չէլսալիս, ենթասպայ Եաշար Պապայեւը, շարքային Էլչին Մուսթաֆաաթեւ: Այս լուրը հաղորդեց նաեւ «Ռիփորթ.ազ» կայքը:

Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութիւնը հաղորդեց, որ հայ-ատրպեյճանական պետական սահմանագօտիի հիւսիսարեւելեան հատուածին մէջ թշնամիին արձակած կրակոցներէն նահատակուած են հազարապետ Գարուշ Համբարձումեանը, քափիթեն Սօս Էլբակեանը, զինուորական ծառայողներ, տասնապետներ Սմբատ Գաբրիելեանն ու Գրիշա Մաթեոսեանը: Յուլիս 15-ին մինչեւ կէսօր իրավիճակը համեմատաբար խաղաղ էր: Սոյն օրուան տուեալներով՝ ատրպեյճանական կողմը ունի 12 կորուստ, իսկ հայկական կողմը՝ 4 նահատակ եւ 20 վիրաւոր:

ՎԿՆԱՐԿ

ՌԻՐԻՇԻ ՌԻՆԵՑԱԾԸ ԻՐԱՑՆՈՂ ԹՈՒՐԿԻԱՆ...



Ս. Սահտեղճեան

Թուրքիոյ նախագահ «սուլթան» Էրտողան Ուրբաթ, 10 Յուլիսին ստորագրեց հրամանագիր մը, որուն հիմամբ, դարաւոր Այա Սոֆիա տաճարը դարձեալ մզկիթի պիտի վերածուի: Էրտողան կը պատրաստուի 15 Յուլիսին աղօթելու պատմական տաճարին մէջ:

տանքի հակադարձութեան առջեւ: Անմիջականօրէն շահագրգիռ Յունաստանը, իր մշակոյթի նախարարին միջոցով, այս որոշումը որակեց «աշխարհի երեսին շարտուած՝ գըրգռիչ մարտահրաւեր»: Ռուսիոյ Ուղղափառ եկեղեցւոյ պատրիարքը նախօրօք քննադատած էր առա-



Պսակածեւ ժառիր տարածման հետեւանքները կրող աշխարհը բաւական յուզում ապրեցաւ շաբաթներ շարունակ՝ Էրտողանի դիտաւորութեան հրապարակման պատճառով: Թուրքիոյ մէջ եւ այլուր, ստեղծուեցան սուր բանավեճեր, եղան արդար ու հիմնաւորեալ ամարկութիւններ: Էրտողան գետին զարկաւ բողոքի բոլոր արտայայտութիւններն ու պատմութիւնը չխեղաթիւրելու կոչերը, եւ հիմնուելով «աղուեսի պոչ» դատարանի մը վճիռին վրայ, ի վերջոյ արձակեց հրամանը:

Թող աշխարհը փոթորկի եւ յիշեցնէ, որ աւելի քան 15 դարու կենսք ունեցող տաճարը յունական է, թէ՛ Բիզանդական կայսրութիւնը կործանող սուլթանական Թուրքիան զայն արդէն անգամ մը մզկիթի վերածած էր, սակայն հանրապետական Թուրքիան, աւելի քան 80 տարի առաջ, զիջում մը ըրած էր ու զայն վերածած՝ թանգարանի (աշխարհը իր «քաղաքակրթութեամբ» համոզելու քարոզչութեամբ մը): Պատմութիւն եւ այլոց մշակութային ժառանգութիւնները ոչ ի՛նչ կ'ընեն սուլթաններու գտարին ժառանգորդ Էրտողաններուն, որոնք կրնկակոխ հաւատարմութեամբ կը շարունակեն ուրիշին ստացուածքը, հողը, մշակութային ժառանգութիւնն ու իրագործածը իրացնելու, իրենցը սեպելու աւագակային վարքագիծը:

Էրտողանի հրամանագիրն ու անոր յենարան ծառայած՝ վարչական ատենակի վճիռը ասպարեզը լայն բացին մեկնաբանութիւններու եւ գրեթէ միաձայն՝ դատապար-

չադրանքը, ԻՆՏԵՍՔՕ-ն եւս կոչ ուղղեց, որ համաշխարհային մշակոյթի մէկ ծանօթ կառոյցին դիմագիծը չխեղաթիւրուի անգամ մը եւս: Դատապարտանքի եւ դժգոհութեան հակազդեցութիւններու շղթան այնքան երկար է, որ կրնայ բաւարար ըլլալ Էրտողանն ու իր դատարանը... կախաղան հանելու համար:

Մեկնաբանութիւններն ալ ծիածան կազմեցին: Կ'ըսուի, թէ «սուլթան»ը այս փուլին է որ այս քայլին դիմած է, որովհետեւ անոր ժողովրդականութիւնը մեծ նահանջ արձանագրած է, ուրեմն՝ նման քայլով կը ձգտի որոշ ենթահող վերականգնել, տակաւին՝ ստեղծուած աղմուկին մէջ խլացնել ընդդիմադիրներու բռնադատման յառաջացուցած ալիքները: Արդէն որոշումը ցնծութեան ցոյցերով դիմաւորող թուրքերու խանդավառութիւնը որոշ չափով կ'ապացուցէ այս ու նման մեկնաբանութիւններ: Տակաւին, հարցումներ ծագած են, թէ ի՞նչ ճակատագիր կը սպասէ այն քանդակներուն եւ որմանկարներուն, որոնք վաւերագրած են տաճարին քրիստոնեական դիմագիծը:

Մեզի՛ հայերուս, ինչպէս նաեւ Թուրքիոյ դարաւոր բռնադատութիւններուն գոհ գացած ժողովուրդներուն համար, Էրտողանի այս որոշումը կը դիտուի, պէ՛տք է դիտուի այլ բովանդակութեան մէջ. սա նորագոյն ապացոյցն է, որ Թուրքիա՛ն կոչուի սելճուգեան-մոնկոլական-թաթարական, սուլթանական, իթթիհատական թէ հանրապետական՝ դարձեալ պահպանած է

բռնագրաւորի եւ ուրիշին կերտածը իւրացնողի յատկանիշը: Թուրքիոյ համար Այա Սոֆիա մը բռնագրաւելն ու մզկիթի վերածելը ունի այն արժեքը, ինչ որ ունի հայուն, կիպրացիին, սուրիացիին, իրաքցիին եւ այլոց հողերը գրաւելու եւ թրջանելու վարքագիծը: Այս մասին չ'արժեր հին ցանկերը վերանորոգել ու արձանագրել այս սիւնակին մէջ:

Մեր ու թրջական աւագակութեանց գոհ դարձած ժողովուրդներուն արդար իրաւունքն է այս հանգրուանին եւս հարցում ուղղել. աշխարհը պիտի շարունակե՞ հանդիսատես մնալ նորօրեայ աւագակութեան, որուն միայն մէկ օրինակն է Այա Սոֆիան: Մենք՝ հայերս առաջիններէն ենք, որ բողոքի եւ պահանջատիրութեան ձայն պիտի բարձրացնենք մշակութային այս ոճիին դէմ, ո՛չ միայն անոր համար, որ շուրջ 10 դար առաջ, հայ անուանի ճարտարապետ մը՝ Տրդատ անուն, այսօր աւերակի վերածուած Անիի մայր տաճարը կերտողը, վերակառուցած է երկրաշարժի հետեւանքով փուլ եկած այս կոթողին գմբէթը եւ

պատմական հայրենիքին մեծ մասը, կը փճացնէ անոր վրայ կերտուած մեր մշակութային ժառանգութիւնները, իսկ կարգ մը կոթողներ ալ կը շահագործե՛ գանոնք փորձելով աշխարհին ներկայացնել իբրեւ... թրջական իրագործումներու նմոյշներ: Այս կալուածին մէջ ալ, Աղթամարի պատմական եկեղեցւոյ ողիսակաւք ծանօթ է մեզի ու աշխարհին: Չենք մոռնար, որ Թուրքիա նոյն այս աւագակային վարքագիծը օրինակ տուած է «եղբայր» Ատրպէյճանին, որ իր հասողութեան սահմաններուն մէջ կը շարունակէ քանդումը, իրացումը, փճացումը...

Մեր եւ մեզի պէս տուժողներուն (ո՛չ միայն քրիստոնեաներ, այլ նաեւ իսլամներ) իրաւունքն է բարձրադասակ պահանջել, որ Թուրքիոյ վարիչներուն արդի ծովահենութեան վերջ տրուի: Սա Թուրքիոյ ներքին գործերուն միջամտել է (որմէ զգուշացրէ ի յոյն նախարարը...), ո՛չ ալ վերապահութիւնն ու թշնամանք՝ Իսլամին նկատմամբ: Եթէ որեւէ կրօնի հետեւորդ կը ցանկայ ծունկ մը աղօթք ընել քրիստոնեական կամ



հայկականութեան դրոշմ մըն ալ դրած է անոր վրայ, այլ մասնաւանդ այն պատճառով, որ նոյն Թուրքիան՝ Էրտողանի եւ զայն կանխողներուն Թուրքիան, բռնագրաւած է մեր


այլ սրբավայրի մը յարկին տակ, վստահաբար ո՛չ ոք պիտի ամարկէ: Յարցը հո՛ն է, այլ՝ կալուածին, հողին ու երկրամասին պատկանելիութեան մէջ:

«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Խմբագիր՝ Զարմիկ Զիւլբեղեան-Պողիկեան
Սրբագրիչներ՝ Զեփիւռ Պապիկեան-Աւագեան
Յուշիկ Ղազարեան
Ձեւաւորող՝ Յովսէփ Զալօղլեան
Գրաշար՝ Անի Թովալեան-Սարոխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան
Կայքէջի պատասխանատու՝ Քրիստ Խրոյեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիւլբեղեան
Հաշուապահ՝ Սեւակ Կիւլվանեսեան

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱԶԳԱՅԻՆ ԴԻՏԱՆԿԻՒՆԷ



Հայկ Պարթալեան

Երբ քաղաքական որեւէ նիւթ շուրջ քննարկում կատարուի, կարելի է պատերազմին չանդրադարձնալ: Այս մէկը բնական կը թուի եթէ գիտնանք, որ մասնաւորապէս միջազգային յարաբերութիւններու մէջ պատերազմը կամ գինեալ հակամարտութիւնը ընդհանրացած երեւոյթ է, միեւնոյն ատեն արտացոլումն է պետութիւններու անհամա-

նալիք ու միջազգային առողջ յարաբերութիւններու խոչընդոտ պիտի համարեն, իսկ այլ խաւեր պատերազմը որպէս փոփոխութեան ու անցեալէն աւելի լաւ համակարգի ստեղծման միջոց պիտի նկատեն:

Ես համոզուած եմ, սակայն, որ խաղաղութիւնը, արդարութիւնը կամ այսպիսի այլ իտեալներ գանազան իմաստներ ու վերլուծութիւն-



պատասխան շահերուն: Այնպէս ինչպէս մարդիկ իրարու դիտմամբ վնաս կը հասցնեն, պետութիւններու միջեւ եւս անհանդուրժողութիւնն ու գործակցութեան ձախողութիւնը կ'ուղղէ գիրենք իրարու դէմ աշխատելու, մինչեւ իսկ՝ պատերազմելու:

Պատերազմի այս պարզ հասկացութիւնը դարերու ընթացքին բարդացաւ եւ գարգացաւ: Այսօր շատ մը երկիրներ կը պատերազմին նոյնիսկ առանց սեփական իրենց ուժերը օգտագործելու, այլ պետութիւններ կը պատերազմին առանց զենքի կամ բանակի, իսկ ուրիշ պետութիւններ պատերազմի մէջ կրնան յայտնուիլ առանց իրենց գիտակցութեան:

Անվիճելի է այն, որ արդի պատերազմի ձեւերն ու միջոցները տարբեր են անցեալի օրինակներէն, սակայն արդեօք նպատակներն ալ տարբեր են, արդեօք պատերազմը միջոց է խաղաղութիւն կերտելու, հետեւաբար կարելի՞ է խօսիլ արդար պատերազմներու մասին:

Իրականութեան մէջ ամբողջական պատասխաններ չկան այս առումով: Ոմանք ազատական միտքերէ մեկնելով պիտի ըսեն, որ լաւ պատերազմ գոյութիւն չունի, ոչ ալ վատ խաղաղութիւն: Ոմանք, ազգային շահերէ մեկնելով, իրենց մղած պատերազմները նուրբ վերնագիրներով պիտի գարդարեն, ուրիշներ ալ գիտական դիտանկիւնէ մեկնելով, իւրաքանչիւր պատերազմ խաղաղ իրավիճակի սպառ-

ներ կրնան ունենալ: Այսինքն, ինչ որ Զինաստանի համար արդար է ու իրաւական, հաւանաբար այդպէս չըլլայ Յնդկաստանի համար, իսկ եթէ Վրաստանը նկատի ունի իր բռնագրաւած հողերու ազատագրումը որպէս մշտական խաղաղութեան նախապայման, այդ մէկը պիտի սեպուի Ռուսիոյ դիտանկիւնէն որպէս ազգային անվտանգութեան սպառնալիք:

Ի՞նչ պէտք է հասկնանք այս բոլորէն ուրեմն: Արդեօք միջազգային միջավայրի մէջ խաղաղութիւնը անհասանելի երազ մըն է, արդեօք կարելի է ազգային կամ երկիրներու նեղ-նեղ շահերը մէկ կողմ դնել եւ համախմբուիլ մարդկային վեհ արժանիքներու շուրջ:

Իրապէս կարելի չէ հարցումներ են ասոնք, որոնք կը կարօտին տրամաբանական պատասխաններու: Իմ կարգիս, մեր ապրած պայմաններէն մեկնելով, այս հարցումը ընթերցողներուն կ'ուղղեմ: Այսօր Հայաստան եւ Սուրիա կը գտնուին մեծ ուժերու կործանիչ հակամարտութիւններու ու մրցակցութիւններու գօտիին վրայ, ուստի ինչպէ՞ս կարելի է առնուազն խաղաղութիւնը պահել, զենք արտադրել ու դիզել լարուածութիւնները չե՞ն սրեր, անցեալէն քարտեզներ հանելը չի՞գրգռեր ժողովուրդներուն միջեւ արդէն իսկ լարուած յարաբերութիւնները: Միւս կողմէ, սակայն, եթէ զենքի չդիմենք ու բաւարարուինք, գոհանանք մեր ներկայ վիճակով, խաղաղութեան պիտի հասնի՞նք...:

ՀԱՅԱՐԱՌՈՐ...

Սկիզբ՝ էջ 1

Արհ. Տեր Պետրոս Արք. Միրիաթեան, Սուրիոյ Հայ Աւետ. Համայնքի պետի ներկայացուցիչ Պատուելի Սիմոն Տեր Սահակեան, Սուրիոյ խորհրդարանական ընտրութիւններու ազգի թեկնածու Ժիրայր Ռէիսեան ու իր ցանկին մասնակից թեկնածուներ Պուլուս Մկերպէնէ եւ Սաուսան Նիգար Խալիլի, հալէպահայ կազմակերպութիւններու, ազգային, մարզական, բարեսիրական եւ մշակութային միութիւններու ներկայացուցիչներ եւ հալէպահայերու հոծ բազմութիւնն է:

Արաբերէն բացման խօսքով Աննա Պարսումեան լուսարձակի տակ առաւ Սուրիոյ մէջ տարբեր ազգերու խաղաղ գոյակցութիւնը, եղբայրական սերն ու համերաշխ կեանքը: Ապա յայտնեց. «Սուրիահայերն ալ սուրիական հայրենիքին անբաժան մասնիկը ըլլալով ապրեցան եւ ծաղկեցուցին օրինեալ այս երկիրը, շնորհիւ Սուրիոյ խոնհեմ կառավարութեան ընձեռած պայմաններուն, որուն համար երախտապարտ է մեր ժողովուրդը»:

Հայերէն բացման խօսքով Սագօ Խալիլեան յայտնեց, որ այսօրուան հաւաքին նպատակն է Սուրիոյ երեսփոխանական ընտրութիւններուն մասնակցութեան կարելիութիւնը շեշտելը: Ապա դիտել տուաւ. «Դարեր շարունակ ապրեցանք Սուրիական Հայրենիքի հողին վրայ, առաւել եւս վերջին պատերազմի շրջանին հաստատեցինք սուրիացիի մեր ինքնութիւնը՝ մեր նահատակներու արեամբ: Մեր հաւատարմութեան ուխտը իրականացուցինք գործնականօրէն, լի ու լի կատարեցինք քաղաքացիի մեր պարտաւորութիւնները եւ ահա եկած է պահը, որ գործադրենք մեր իրաւունքը, ուղու երկու ջուրէտուփերէն մեր ձայնը տալով ազգընտիր թեկնածուին: ... Միասնութիւնը ուժ է, քուէն ուժ է, հետեւաբար մեծագոյն ուժի արտայայտութիւնը մեր միասնական խօսքն է, որ եկած ենք այսօր արտասանելու»:

Այս առիթով յաջորդաբար խօսք առին Սուրիոյ երեսփոխանական ընտրութեան թեկնածու Սաուսան Նիգար Խալիլի, որ դիտել տուաւ, որ ժողովուրդին ձայնը հասցնելու միակ հարթակը խորհրդարանն էր գործելն է: Ընտրական ցանկին մաս կազմող իրաւաբան Պուլուս Մկերպէնէ, լուսարձակի տակ առաւ հայրութեան ներդրումը սուրիական հայրենիքի բարգաւաճ գործընթացին մէջ, ապա իր հօր յուշերուն անդրադառնալով ըսաւ. «Հայերը տարագրութենէ վերջ Սուրիա հասնելով միայն երկու բան ուզած են՝ ջուր եւ աշխատանք: Անոնք երբեք իրենց ապրուստին ապահովումը ուրիշին չեն վստահած»:

Ազգի թեկնածու Ժիրայր Ռէիսեան նկատել տուաւ. «Այսօրուան ձեռնարկը դրսեւորումն է հաւաքական աշխատանքին, ամբողջական գիտակցութեան, հաւատքին, պա-

տանիին ու տարեցին անսակարկ նուիրումին եւ ազգային միասնականութեան: Համայնքներ, միութիւններ եւ կազմակերպութիւններ բոլորը միատեղ, մէկ թեկնածուով ներկայանալու իմաստութիւնը դրսեւորեցին, որուն համար կը մնամ միշտ հպարտ եւ երախտապարտ: Այսօր պատասխանատուութեան հրամայականին առջեւ ենք, որպէս սուրիահայեր եւ սուրիացի քաղաքացիներ միասնական ճիգերով ազգային քաղաքական գործերու հետապնդման մեր գործին առջնային Սուրիական Հայրենիքի վերականգնումն ու վերածաղկումը խթանելու»: Ապա ան կոչ ուղղեց մեր հեղինակութիւնը պահելու մեր վարկով: «Դառնալք հեղինակութիւնն է ուժ՝ կատարելով մեր ազգային պարտաւորութիւնը», եզրափակեց Ռէիսեան:

Ելոյթ ունեցաւ Համազգայինի «Շուշի» պարախումբը, իսկ ազգային եւ հայրենասիրական երգերով՝ հալէպահայ սիրուած երգիչներ՝ Մարիա Զիչեան, Խաչիկ Աշճեան, Կասիա Պաղտիկեան, Լուսի Տեր Յովհաննեսեան, Վահէ Յովհաննեսեան, Մարիւէ Մարգարեան, Նուազակցութեամբ «Սպիտակ» նուազախումբին, գեղարուեստական դէկավարութեամբ տոքթ. Ռաֆֆի Ապեճեանի:

Հուսկ, Առաջնորդ Սրբազան Հայրը իր գօտեպնդիչ խօսքով կոչ ուղղեց ներկաներուն միասնական ոգիով կատարելու իրենց քաղաքացիական եւ ազգային պարտաւորութիւնը, ուղու երկու դէպի քուէտուփեր: Ան իր պատգամին մէջ ըսաւ. «Սուրիահայր չ'աշխատիր յաղթանակելու համար: Հալէպահայը իր կեցուածքով արդէն իսկ յաղթանակած է: Անցնող ինը տարիներուն ընթացքին, մեր քաղաքական գիծը եւ կեցուածքը յաղթանակեցին, մենք յաղթահարեցինք բոլոր դժուարութիւնները՝ շնորհիւ մեր ժողովուրդին համբերատարութեան, թափած արեան եւ գոհողութիւններուն: Սոյն ընտրութիւններուն սուրիահայրութիւնը անգամ մը եւս յաւերժական իր հաւատարմութիւնը պիտի յայտնէ Սուրիական Հայրենիքին: Տեր Չօրը անգամ մը եւս պիտի շնչէ, պիտի ապրի եւ պիտի պայքարի՝ տեր դառնալով Սուրիական Հայրենիքին եւ հայկական մեր արժէքներուն: Մենք մեր քուէարկութեամբ եւ ազգի թեկնածու Ժիրայր Ռէիսեանին ձայն տալով, մեր ազգը, եկեղեցին, ազգային կառուցներն ու կազմակերպութիւնները կենսունակ պիտի պահենք: Մեր ազգի թեկնածուն ժողովուրդի ծոցէն ծնած պիտի շարունակէ իր առաքելութիւնը՝ յանուն ժողովուրդին բարօրութեան, եւ պիտի արտացոլացնէ մեր մտահոգութիւններն ու Սուրիական Հայրենիքին վերականգնումին նպաստելու վճռականութիւնը: Մեր քուէն պիտի ըլլայ մեր հաւատարմութեան, ծառայութեան, ապահովութեան եւ ինքնապաշտպանութեան ձայնը: Միասնաբար հաւաքական աշխատանքով եւ միասնական ճիգով պիտի շարունակենք մեր երթը»:

Թուրքիոյ նուրջ

ԷՐՏՈՂԱՆ ԱՏՈՐԱԳՐԵՅՑ Ա. ՍՈՖԻԱ ՏԱՃԱՐԸ ՄԶԿԻԹԻ ՎԵՐԱԾԵՆՈՒ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Թուրքիոյ Գերագոյն Վարչական դատարանը 10 Յուլիսին ջնջեց Ա. Սոֆիա տաճարը թանգարանի վերածելու Թուրքիոյ կառավարութեան 1934-ի որոշումը՝ այդպիսով ճամբան հարթելով գայն մզկիթի վերածելու Թուրքիոյ Նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի ծրագիրին առջեւ:

«Կրիքսիթիթայն» կայքը հաղորդեց, որ Էրտողանի գաղտնի խորհրդական Մեհմետ Արըզ «Թուրքիոյ» վրայ գրած է, որ դատարանը միաձայնութեամբ ջնջած է 27 Նոյեմբեր 1934-ի որոշումը:

Դատարանի որոշումի հրապարակումէն անմիջապէս ետք Էրտողան ստորագրեց Ա. Սոֆիան մզկիթի վերածելու հրամանագիրը:

«Սքայ Նիուզ» հաղորդեց. «Յունաստան կը քննադատէ Այա Սոֆիայի կարգավիճակը փոխելու վերաբերող Էրտողանի որոշումը՝ գայն նկատելով միջազգային ընտանիքին ուղղուած բացայայտ կրօնական հրահրում մը»:



Արամ Ա. կաթողիկոս կըզ ողորդելով միջազգային ընտանիքին ըսաւ. «Արժեքներ ոտնահարելու եւ միջազգային սկզբունքներ անտեսելու Թուրքիոյ վարքագիծը կը շարունակուի»:

Կիրակի 12 Յուլիս 2020-ի կեսօրին իր գրասենեակի պատուհանէն արտասանած աղօթքի աւարտին, Ֆրանչիսկոս Պապը յայտնեց. «Ա. Սոֆիային մասին կը մտածեմ եւ կը ցաւիմ»:

Ռուսիոյ ուղղափառ եկեղեցին իր կարգին ցաւ յայտնեց, որ թրքական դատարանը Ա. Սոֆիայի թանգարանի կարգավիճակը ջնջելու իր որոշումին մէջ ականջ չէ տուած «միլիոնաւոր քրիստոնէական մտավայրութիւններուն»:

Նախքան այդ, քրտամետ ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցութենէն Թուրքիոյ խորհրդարանի անդամ Կարօ Փայլան դիմատետրի իր էջին վրայ գրառում կատարելով յայտնեց. «Ա. Սոֆիայի տաճարին մասին իր որոշումով Էրտողան ցոյց կու տայ, որ յարգանք չունի այս հողին բազմադարեայ պատմութեան եւ ինքնութիւններու բազմազանութեան նկատմամբ: Ա. Սոֆիայի տաճարը պէտք է դադորի միջկրօնական հարց ըլլալ եւ պահպանուի թանգարանի կարգավիճակով՝ իբրեւ մարդկութեան համաշխարհային ժառանգութիւն»:

Միւս կողմէ՝ ԻԻՆԵՍԵՕ յայտնեց, որ զինք պէտք է տեղեակ պահել Ա. Սոֆիա տաճարի թանգարանի կարգավիճակի որեւէ փոփոխութեան մասին՝ աւելցնելով, որ Համաշխարհային ժառանգութեան Յանձնախումբը պէտք է քննէ այդ փոփոխութիւնը:

ԻԻՆԵՍԵՕ յայտնեց, որ Ա. Սոֆիան իր Համաշխարհային ժառանգութեան ցուցակին վրայ ներառուած է իբրեւ թանգարան, եւ այդ պատճառով որոշ յանձնառութիւններ եւ իրաւաբանական խոստումներ ունի: «Ուստի պէտք է պետութիւնը վստահ ըլլայ, որ պիտի չկատարէ բարեփոխում մը, որ վնասակար ըլլայ իր հողերուն վրայ գտնուող եւ տուեալ ցանկին վրայ ներառուած վայրի մը համաշխարհային ակներեւ արժեքին հանգամանքին», յայտարարեց կազմակերպութիւնը:

Ա. ՍՈՖԻԱ՝ ԶՐԻԱՏՈՆԵԱԿԱՆ ՄԵՏԱԳՈՅՆ ՏԱՃԱՐՆԵՐԷՆ ՄԻՆ

Ամբողջ հազարամեակ մը, Կ. Պոլսոյ Ա. Սոֆիա տաճարը կը նկատուէր քրիստոնէական մեծագոյն կառոյցը: Կառուցուած է Բ. Ե. 532-537 թուականներուն, Բիզանդիոնի Յուստինեանոս կայսեր օրօք, կը նկատուի բիզանդական ճարտարապետութեան գլուխ գործողը: Ա. Սոֆիա կը նկատուի այն տաճարը, որ փոխեց ճարտարապետութեան պատմութեան ընթացքը: Անոր անուանման բառացի թարգմանութիւնը կը նշանակէ՝ «Աստուածային Ա. Իմաստութեան Տաճար», յունարէնով կը ճանաչուած՝ «Հայա Սոֆիա»: Ոմանք անոր անունը թիւրիմացաբար կ'անուանեն քրիստոնէայ Նահատակ՝ Սրբուհի Սոֆիայի հետ:



Ա. Սոֆիա այդ բլուրին վրայ կառուցուած երրորդ մեծ տաճարն էր: Նախապէս կառուցուած տաճարները քանդուած էին ժողովրդական ապստամբութիւններու հետեւանքով: Աւելի քան հազարամեակ մը ան ծառայած է իբր Յոյն Ուղղափառ եկեղեցւոյ պատրիարքական մայր տաճար, դառնալով հազարամեակներու պատմական դէպքերու ականատես: 1204-1261 թուականներուն, խաչակրութիւններու շրջանին, Ա. Սոֆիան նկատուած է Նաեւ Կաթողիկէ եկեղեցւոյ տաճարներէն մին:

Կառուցուելէն ետք, գանազան ժամանակներու տեղի ունեցած երկրաշարժներուն պատճառով, տաճարին գմբէթը կը մնար անկայուն վիճակի մէջ եւ յաճախ կը փլէր: 986 թուականի երկրաշարժէն ետք, Կ. Պոլիս կը հրաւիրուի Տրդատ ճարտարապետը, որ կառուցած էր Անիի մայր տաճարի գմբէթը եւ մեծ հռչակ կը վայելէր: Տրդատ գմբէթին կողքին, կը կատարէ Նաեւ այլ վերականգնումի աշխատանքներ, որովհետեւ տաճարին կառոյցը ճեղքուած էր եւ փլուզման վտանգի տակ կը գտնուէր: Տրդատի շնորհիւ տաճարը ոչ միայն կանգուն մնաց մինչեւ մեր օրերը, այլ Նաեւ արտացոլացուց 11-12-րդ դարերու հայ ճարտարապետութեան հետքերն ու հայութեան նուաճած շինարարական արուեստի զարգացման աստիճանը:

Ա. Սոֆիա շարունակեց ծառայել իբր քրիստոնէական տաճար մինչեւ Բիզանդական կայսրութեան վերջին օրը: 29 Մայիս 1453-ին, օսմանեան զօրքերը երկար պայքարումէ ետք նուաճեցին Կ. Պոլիսը եւ անմիջապէս Ա. Սոֆիա տաճարը վերածեցին մզկիթի: Ան այս կացութեամբ մնաց մինչեւ 1931, երբ Հանրապետական Թուրքիոյ որոշումով վերածուեցաւ թանգարանի: Ան ներառուած է ԻԻՆԵՍԵՕ-ի մշակութային միջազգային ժառանգութեան ցանկին մէջ, ի յիշեցում անոր փառաւոր անցեալին:

Անգլերէն թարգմանեց Յուլիկ Ղազարեան

ԵՐԲ ԾԱՌԵՐԸ...

Սկիզբ՝ էջ 8

պգտիկներուն ու դեռ շատ ու շատ նիւթերու շուրջ, որոնք միտքը կը չարչրկէին: Այսօր Մանուշ իր խօսակցութեան նիւթը սկսաւ տան ներկով ու տիւաններով:

Մանուկ շատ լաւ կը լսէր Մանուշին բոլոր ըսածները, պարտեզին մէջ ձայն-ձիւն չկար, երբեմն թռչուններու քաղցր ճիւղոցը կը լսուէր: Մանուշին ձայնը ոչ միայն Մանուկ կը լսէր, այլեւ իրենց որացուհին՝ Նագլին, որ միշտ պատուհանն էր, մազերը ճակատը ծածկած էին ու հետաքրքիր աչքերը հազիւ կ'երեւէին: Սակայն Մանուկ ուզածը կը լսէր, չուզածն ալ չլսելու կու գար: Ան շատ լաւ գիտէր, որ կնոջ պահանջը արդարացի է, ինքն ալ կը փափաքէր, բայց կարգ չհասաւ անոնց: Ան շատ լաւ գիտէր, որ Մանուշ քիչ անգամ ինքն իրեն համար բան մը ուզած էր:

Պգտիկներուն կարիքներն ու տունը առաջնահերթութիւն էին անոր համար:

- Մանուշ,- բարձրաձայն կանչեց Մանուկ,- Ո՞ր ես, ձայնդ չէլիլը:
- Ձեռքս եղած ճիւղերը խփրին վրայ կը պարպէի, գործը բաւական առաջ գնաց, առաջին օրուան համար:

Ու այդպէս ժամանակը կ'անցներ: Մանուկ ծառ-ծառ, իսկ Մանուշ նիւթ-նիւթ ցատկոտելով: Քանի մը ժամ ետք Մանուկին ձեռքերն ու մկանները կը սկսէին յոգնիլ, իսկ Մանուշին կռնակն ու ոտքերուն մկանները՝ ցաւիլ: Երկուքին մարմինները աշխատանքի վարժութիւնը կորսնցուցած էին:

- Երթամ թոնրի հացին ու սուրճին դոյլը բերեմ, քիչ մը հանգչիմք,- ըսաւ Մանուշ:

- Մինչեւ հացն ու սուրճը բերես, ես ալ այս ծառը վերջացուցած կ'ըլլամ: Սուրճ մը հիմա մեղրի պէս կ'իջնէ: Մանուշ ծառի մը շուքին տակ

դրած էր դոյլը: Յոգնած քայլերով դէպի դոյլը կ'ուղղուէր ու ի՞նչ տեսնէ աղէկ, հացի տոպրակին ծայրը կրծուած ու ...: Դոյլը շալկած, յոգնութիւնը մոռցած, ջղայնացած կը բողբէ Մանուկին:

- Կայ-չկայ Նագլիին կատունն է, հացին ծայրը կրծած է:

- Ինչ կը ջղայնանաս, ճանը՛մ, կատունն ալ անօթի է, բան չէղաւ:

Մանուկ կատունին կերած բաժինը կտրելով ծառին տակ նետեց կերուած կտորը:

- Հիմա կատունն կու գայ, ուտելը կը շարունակէ,- հանդարտութեամբ աւելցուց:

Մանուկ բաճկոնը հանելով գետին դրաւ, որպէսզի Մանուշ վրան նստի: Գետինը դեռ պաղ ու խոնաւ էր, արեւէն չէր կշտացած: Մանուկին այս հոգատարութիւնը շատ կ'ուրախացնէր Մանուշը:

- Ես ալ նախաճաշ չըրի, ախորժակս սրած էի աս հացը ուտելու, բայց ալ չեմ կրնար աս հացէն ուտել, մինչեւ տունն ալ երթալու ո՛չ սիրտ ունիմ, ոչ ալ ուժ,- ըսաւ Մանուշ:

Մանուկ, Մանուշին ձեռքէն ու դաստակէն բռնած, կ'օգնէր որ հանգիստ նստի ու տեղաւորուի իր բաճկոնին վրայ: Մանուշ փոխանակ բաճկոնին վրայ նստելու, կռնակին վրայ ինկաւ:

- Ձեռքդ բռնած չըլլայի, կռնակդ քարին պիտի գար: Երկուքը բարձրաձայն խնդալ սկսան: Մանուշ կատունին ըրածը մոռցած էր, ի՞նչ հոգ, ու անոնք ուրախ-զուարթ գործը առաջ տանելու մասին կը մտածէին:

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ-190



Լայա Միսկարեան-Միսկարեան

Պատկանեան ծնած է Նոր Նախիջեան, յայտնի մտաւորականներու գերդաստանի մէջ: Պատմական կարճ շեղում մը կ'ընենք, պարզելու համար, որ հայանուն այդ բնակավայրը կը գտնուի Ռուսիոյ հարաւը, Կովկասէն հիւսիս, Սեւ ծովէն արեւելք: Ռուսաց Եկատերինս Բ. կայսրուհին, Տոն գետի ափին գտնուող Ռոստով բնակավայրը գարգացնելու նպատակով, 1779-ին Խրիմէն գաղթի կը մղէ 12.600 վաճառական ու արհեստաւոր հայեր: Անոնք իրենց Նոր բնակավայրը կը կոչեն Նախիջեան, որ շուտով կ'անուանուի Նոր Նախիջեան, տարբերելու համար հայկական բուն գաւառակէն: Հայերը կարճ ժամանակի մէջ կը շէնցեն քաղաքն ու շրջակայ գիւղերը, կ'ունենան 6 եկեղեցիներ, վանք մը, տպարան, արհեստից, առետուրի, արական ու իգական դպրոցներ, թատրոն, թերթեր եւ նոյնիսկ քաղաքի գիւսանշան՝ մեղուափեթակ: Գաղութ մը, որ մինչեւ օրս կը ջանայ պահել հայեցիութիւնը՝ ի շնորհիւ (կամ ի ցաւ) Հայաստանէն գաղթին: Չմոռնանք յիշել, որ Նորնախիջեանցի էին Նաեւ Միքայէլ Նալբանդեանը, Մարտիրոս Սարեանը, Սիմոն Վրացեանը եւ այլ նշանաւոր անձեր:



Աւարտելէ ետք Մոսկուայի Լազարեան ճեմարանը (1815-1921), Պատկանեան ուսանած է Նաեւ Մոսկուայի, Պեթերսպուրկի ու Թորպատի (Եսդոնիա, Խ. Աբովեանի ուսանած քաղաքը) համալսարաններուն մէջ: Անոր ազգային գիտակցութեան վրայ հսկայական ազդեցութիւն ունեցած է Լազարեան ճեմարանը, որ շուրջ մէկ դար կովկասահայ ու ռուսահայ երիտասարդներուն կատարեալ գիտութիւն ջամբելու եւ անոնց հոգիները հայօրէն թծելու դարբնոց էր (Ներկայիս Մոսկուայի Հայկական նրբանցք կոչուած փողոցը գտնուող Լազարեան ճեմարանին շէնքը Հայաստանի Հանրապետութեան կը պատկանի: Հոն է ՀՀ ղեսպանատունը):

Պատկանեան կարճ շրջան մը ապրած է Թիֆլիս, դասաւանդած է Ներսիսեան դպրոցին մէջ եւ հորը՝ Գաբրիէլ քահանային հետ հրատարակած է կովկասահայոց առաջին թերթը՝ «Արարատ»: Այս շրջանին ալ Թիֆլիսի բարբառով թիֆլիսահայոց բարքերու մասին երգիծական քերթուածներ գրած է: Այնուհետեւ ամբողջ կեանքը ապրած է ստեղծագործած է ծննդավայրին մէջ:

Գրապայքարի անգիջում մարտիկը

Այս ասպարեզին մէջ Պատկանեանի ունեցած դերին մասին խօսելէն առաջ քիչ մը անելի ընդարձակ շեղում կատարենք ու յիշենք, թէ ի՞նչ էր գրապայքարը: Լեզուի մասնագետներ յստակ գիտեն, իսկ մնացեալ մարդիկ իրենց ընթերցումներէն ու տրամաբանօրէն կ'անդրադառնան, որ որեւէ լեզու մշտական գարգացումի, փոփոխութիւններու եւ այլ լեզուներու հետ փոխազդեցութիւններու ենթակայ է: Հինգերորդ դարէն գրական լեզու դարձած գրաբարը այսօր մենք կը գործածենք միայն եկեղեցւոյ մէջ: Անկէ ետք եղող Կիլիկեան հայերէնը (Նաեւ՝ միջին հայերէն կամ ռամկոբէն) առաւել անծանօթ է ժողովրդեան լայն խաւերուն, քանի որ կը հանդիպի միայն միջնադարեան գրականութեան մէջ: Իսկ աշխարհաբար կոչուածը, իր երկու՝ արեւելահայ ու արեւմտահայ ճիւղերով, իր վերջնական իրաւունքը Նուաճեց 19-րդ դարու կեսերուն:

Գիրն ու գրականութիւնը ժողովուրդէն հեռացեր ու չինական այբուբեն դարձեր էին: Անոր կը տիրապետէին սակաւաթիւ կրթուած մարդիկ եւ հոգեւորականներ: Իսկ ժողովուրդը, նայած ապրած միջավայրին, կը խօսեր բարբառային ու օտար լեզուներու բառերով, խառն, անմշակ լեզուով: Այս պայմաններուն տակ դժուարութիւն էր իբրեւ գրաւոր լեզու տիրող գրաբարով կրթել ժողովուրդը: Մինչդէռ Չարթոսքի սերունդի յառաջադէմ մտաւորականութեան այն խաւը, որ կրթուած էր եւրոպական ու ռուսական համալսարաններուն մէջ՝ շատ անելի մեծ նպատակներ կը հետապնդէր: Այդ մեծ նպատակը կը հետապնդէր Կապտուր Աբովեան, երբ իր «Վերջ Հայաստանի» կը գրէր անմշակ ժողովրդական լեզուով, ճամբայ բանալով յաջորդներուն:

Չարթոսքի սերունդի կրթուած մտաւորականները, եւրոպական ժողովուրդներու ազատագրական շարժումներուն ծանօթ ըլլալով, կ'երագ էին հայրենի պետականութեան վերականգնումը, որ կարելի էր միայն գիտել պայքարով: Մինչդէռ 600-ամեայ թրքական տիրապետութիւնը քթացուցեր էր հայ մարդուն ազգային գիտակցութիւնը եւ արժանապատուութիւնը: Ազգին միտքը լուսաւորելու, հայրենիքին հանդէպ սեր ու ազգային հպարտութիւն ներշնչելու, յանուն ազատութեան նահատակուելու գաղափարը սերմանելու լաւագոյն միջոցները այդ օրերուն բոլորին հասկնալի հայերէնով մամուլը, դպրոցը եւ թատրոնն էին: Ժողովրդական լեզուն (աշխարհաբար) մաքրելու եւ հարստացնելու աշխատանքը, հայաշխարհի երկու հատուածներուն մէջ ալ, կը տարուէր 1850-60-ականներուն՝ բուն պայքարի մթնոլորտի մէջ: Գրաբարի կողմնակիցները անընդունելի կը նկատէին ճոխ ու գեղեցիկ գրաբարը փոխարինելու ռամիկ՝ կոշտ ու անմշակ լեզուով: Կարծիքները շատ էին, ոմանք յոյս կը յայտնէին աշխարհաբարի միջոցով աս-

տիճանաբար մօտենալու գրաբարին, ոմանք այդ մէկը հնամուլութիւն կը սեպէին, ոմանք կ'ողջունէին ու հարստութիւն կը նկատէին Նոյն ատեն կազմաւորուող գրական լեզուի երկու ճիւղերու գոյութիւնը, ուրիշներ վախ կ'արտայայտէին, թէ այդ մէկը ազգը առաւել մասնատումի կը տանի:

Ռաֆայէլ Պատկանեան արեւելահայ գրապայքարի առաջին շարքերուն էր: Ս. Փեթերսպուրկ ուսանելու տարիներուն՝ 1855-ին, խումբ մը ընկերներու հետ սկսած էր հրատարակել «Գամառ-Քաթիպա» տետրակները, ուր սուր պայքար կը մղէր տակաւին յամեցող գրաբարամուլներուն դէմ: Առաջին տետրակի ճակատին գրուած էր՝ «Գրէ՛ այնպէս ինչպէս որ խօսում են, խօսէ՛ այնպէս, ինչպէս որ գրում են»: Այնուհետեւ կը գրէ. «Հիմի օրէցօր սակաւանում է գրաբարամուլների թիւը, որոնք եգիպտացւոց քուրմերի նման սեփականացրել էին իրանց բոլոր գիտութիւնները եւ արուեստները, անմատչելի անելով ժողովրդի համար գիրը եւ տպագրութիւնը: Հիմի ամեն էլ գիտեն, որ գիտութիւնը սեփականութիւն չէ միայն ընտրելոց, այլ համայն ազգի եւ մարդկութեան»: Յստակ է որ Պատկանեան եւս, Աբովեանի նման, կողմնորոշուած էր դէպի «հարիր հազարը», այսինքն՝ դէպի ժողովուրդը: Ան ժողովրդական խօսուածքով ալ գրեց իր «Քեօռօլլու» վիպերգը, Թիֆլիսի բարբառով քերթուածներ, իր մայրենի բարբառով՝ «Նոր Նախիջեանի քնար» եւ «Նախիջեանեան Պատմութիւններ»:

«Նախ քաղաքացի եւ ապա պոետ»

սկզբունք մը, որուն անդամաւոր հետեւեցաւ Պատկանեան իր ստեղծագործական ամբողջ կեանքին մէջ: Իր դաւանած քաղաքացին այն մարդն է, որ կ'անտես սեփական նեղ շահերը, կ'ապրի իր երկրի, ազգի ու Նաեւ մարդկութեան տագնապներով, որ գաղափարի գիտնոր է եւ կեանքը պատրաստ է զոհել յանուն հայրենիքին ու իր դաւանած սկզբունքներուն: Անոր սկզբունքայնութիւնը դրսեւորուեցաւ ե՛ւ իր հրապարակագրութեան, ե՛ւ մանկավարժութեան ե՛ւ գրական ստեղծագործութեան մէջ:



Պատկանեան Գաբրիէլ Սունդուկեանին ներբողական մը ձօնած է՝ աշխատաւոր դասի շահերը պաշտպանելու եւ այլասերած մեծահարուստները քննադատելու համար: Այդ խօսքը, առանց որեւէ վերապահութեան, կը վերաբերի Նաեւ իրեն.

Ազգիս շարաւոտ վերքը լուանալ,
Լիրք մեծատունին անվախ ապտակել,
Գոհարով ծածկուած կեղտերը բանալ,
Կեղծաւորների դիմակը պոկել
Ու խեղճ կինտոյին** դնել մարդու շար-
Այդ ամենը զօրեց միայն քո հանճար:

Պատկանեան իր սկզբունքայնութեամբ կարելի է բաղդատել Յակոբ Պարոնեանի հետ: Յանուն ճշմարտութիւնը լոյսին բերելու եւ «ազգի շարաւոտ վերքը լուանալու» անոնք երկուքն ալ ջբաւորութեան, պետական ծանր գրաքննութեան ու իրենց կողմէ ծաղրուած մեծահարուստներու հալածանքին ենթակայ եղան՝ գիտակցաբար, կամաւոր: Լսենք երկուքին ալ խօսքերը: Պատկանեան կը գրէ. «Ես... չեմ կարող եւ չուզեմ կեանքիս մնացորդը մի քանի խելացնող աղաներու խաթրին փոխել... մի՛ խոտորեցուր ինձ ո՛չ իմ ուղղութիւնն է եւ ո՛չ համոզումներն...»: Ապա կը շարունակէ.



«Ես գրել չեմ դարդիլ, քանի որ իմ մէջ կայ խրդճմտանք եւ արդարութեան ձայն: Ինձ գրել չի դադարեցնի ոչ գովասանք, ոչ հայիտյանք, ոչ վարձ եւ ոչ վախ, քանի որ գլխիս մէջ խելք կայ ու քանի որ կրծքիս մէջ սիրտ, ես կը գրեմ, բայց վա՛յ այն մարդուն, որ կ'աշխատէ գրիչը ձեռքէս առնելու, որովհետեւ իմ գիրքը ազգիս փառքի, պատուի ու բախտաւորութեան համար է...»:

Պարոնեան կը գրէ. «Պիտի հալածուիմ, պիտի ծեծուիմ, վնաս չունի, Սոկրատ ալ հալածուեցաւ, ապագայ սերունդը պիտի անմահացնէ իմ անունս»: Ան եւս, իր իսկ բառերով՝ կը նախընտրէ «խոտ ուտել» ու ճշմարտութիւնը խօսիլ, քան թէ պնակ լզել, այսինքն՝ սեփական շահի սիրոյն շողքը թել ազահ ու ազգին արիւնը ծծող աղաները:

Ինչպէս որ Պարոնեան՝ թուրք պետութեան, նոյնպէս ալ Պատկանեան կը քննադատէր ռուս պետութեան հայախալած քաղաքականութիւնը, ուստի գրաքննութիւնը մշտապէս կը հետեւէր անոր գրածներուն: Նամակի մը մէջ ան կը գրէ. «Արդէն վաղուց է **ցենզուրան** (գրաքննութիւն) իմ գրիչի վրան իր կնիքը դրել, եթէ Գամառ Քաթիպան կամ Միւլլուկը (իր ծածկանուններէն-Լ. Մ.) գարնան տերեւների դալարութիւնը եւս գովեն, նա պիտի տեսնէ կամ ջանայ տեսնելու տերութեան դէմ մի ձգտումը»: Գրագետը կը ստիպուէր յաճախ ծածկանուններ փոխել, ինչպէս՝ Ախտամերկեան, Խամիչ, Նշտրակ, Պիգ, Տամդա, Ճանկով Մանուկ, Աշուղ Կարապետ եւ այլն:

Նոր Նախիջեանի աղաներուն հանդէպ Պատկանեանի քննադատութիւնը չափազանց սուր եւ անգիջում եղած է: Կը յիշուի փաստ մը, թէ երբ բանաստեղծը մահամերձ էր, անոր տուն խուժած են աղաներու մարդիկ՝ ձեռագիրները խլելու, եւ բանաստեղծի տղան հազիւ յաջողած է զանոնք փախցնել:

(շար. 2)

** Թիֆլիսի մէջ աշխատաւոր դասակարգ՝ փերեզակ, շրջուն մանրավաճառ, (նկատի ունի Սունդուկեանի «Պեպօ» տրամի հերոս ձկնորս Պեպօն):

ՀԱՅՈՑ ԼԵՉՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՍ (1)

Արմենակ Եղիայեան

Հայոց լեզուի առաջին ուսուցիչներն եղած են մայրս ու հօրենական մեծմայրս, որոնք, սակայն, անգրաճանաչ գեղունակներ էին: Կրնայ հակասական թուիլ ըսածս, ուրեմն փութամ պարզել: Ես՝ իբրեւ հինգ զաւակներու վերջինեկ, աչքերս բացած եմ ընտանիքի մը մէջ, ուր կը խօսուէր երկու հայերէն՝ արդի աշխարհաբարը եւ բարբառ մը. այս վերջինը թրքախառն լեզու մըն էր, որ սեփականութիւնս էր մօրս եւ մեծմօրս. անոնք երկուքը ուրիշ լեզու չէին գիտեր, մինչ հայրս,- որ եղեռնէն ետք տարի մըն ալ ուսուցչութիւն ըրած էր հայ որբերուն,- բարբառի կողքին կը խօսէր նաեւ գրական արեւմտահայերէնը (լաւ գիտէր օսմաներէն ալ):

Հինգ քոյր ու եղբայր կատարելապէս ընտելացեր էինք այս կացութեան. հօրս հետ կը խօսէինք **գրական** հայերէնով, իսկ մօրս ու մեծ մօրս հետ՝ **բարբառային**: Այս կացութիւնը բացարձակապէս չէր նե-



ղեր մեզ. նոյն պահուն, խօսքային նոյն շրջագիծէն ներս հօրս ուղղելով մեր խօսքը հեզասահօրէն կ'ըսէինք՝ **«ինչպէ՞ս կ'ուզես որ երթամ»**, իսկ նոյնը մօրս դառնալով պիտի ըսէինք՝ **«ինտո՞ր կ'ուզես, քի իյամ»**: Մէկ լեզուէն միւսին անցումը այնքան բնական ու անսայթաք կ'ըլլար, որ մենք բացարձակապէս ոչ մէկ ճիգ կը թափէինք, ինչպէս դուք պիտի չթափէիք, եթէ ձեր շուրջը ունենայիք հայ մը եւ չինացի, որոնց առաջինին պիտի դիմէիք հայերէնով, իսկ երկրորդին... չինարէնով:

Մինչեւ այստեղ արտասովոր եւ ուսուցողական ոչինչ կայ:

Ուսուցողականը կը սկսի ասկէ անդին:

Մայրս,- ուրեմն նաեւ մեծմայրս,- կատարելապէս յստակ կ'արտասանէր մեր հինգ եռաշարք բաղաձայնները՝ **պէր** (բէր), **կացի** (գացի), **տուռ** (դուռ), **ծիւն** (ծիւն), **ճուր** (ջուր) եւ այլն: Մինչ հայրս եւ շրջապատս, ներառեալ ուսուցիչներս, այս բառերը կ'արտասանէին **փեր**, **քացի**, **թուր**, **ցիւն**, **ջուր**, ինչպէս կ'արտասանէնք հիմա մենք՝ բոլոր «զտարիւն» արեւմտահայերս:

Լեզու մը սորվելու եւ իւրացնելու լաւագոյն միջավայրը ընտանիքն է:

ընտանիքէն ներս լեզուական ամենաբարդ հարցերը կը լուծուին ամենահեշտ ու պարզագոյն միջոցներով, հոն, ուր դպրոցը այնքա՛ն կը չարչարուի ու կը չարչարե՛ առանց մեծ արդիւնքի հասնելու: Դուք կրնա՞ք պահ մը պատկերացնել, թէ հինգերորդ դարուն հայ մանուկները Հայաստանի մէջ գրաբար կը խօսէին՝ առանց դպրոցի ու գիրքի, իսկ մեր արեւաները տարիներ կը գոհեն՝ առանց հասնիլ կարենալու երբեմնի այդ մանուկներու հեզասահ խօսուածքին: Որմե՞ կը սորվէին այդ գրաբարը,- անշուշտ իրենց շրջապատէն, որ նմանապէս դպրոց ու գիրք չէր տեսած: Ուրեմն, մենք ալ մեր կարգին՝ հինգ քոյր-եղբայր, կատարելապէս, առանց նուագագոյն ճիգի, բայց նաեւ անգիտակցաբար, կը տիրապետէինք այս երկակի արտասանութեան նրբութիւններուն. օրինակ՝ հոն ուր հօրս ուղղելով մեր խօսքը պիտի ըսէինք՝ **«թուռ փացի»**, մօրս ու մեծմօրս ուղղելով մեր խօսքը ինքնաբերաբար կ'ըսէինք՝ **«տուռ պացի»**, որ է **«դուռ պացի»**: Նմանապէս՝ **«ցմեռը հասաւ»** եւ **«ծիմեռը հասաւ»** (ձմեռը հասաւ), **«քիւղ քացիւք»** եւ **«կեղ կացիւք»** (գիւղ գացիւք) եւ այլն:

Անշուշտ հիմա, տասնամեակներ ետք, չեմ կրնար գարմանքս գտալ՝ ի յուշ կարգ մը երեւոյթներու, որոնք օրին աննկատ անցած են մտքիս ծիւրէն: Այսպէս, օրինակ, ինչպէ՞ս կ'ըլլար, որ Փոքր Հայքի այն անշուք գաւառակին մէջ, ուր ծնած ու մեծցած էին ծնողքս եւ նախնիներս, պահպանուած էին եռաշարք բաղաձայնները, մինչ Արեւմտահայաստանի ամբողջ տարածքին խախտած էին անոնք ու դարձած էին երկշարք: Կամ թէ կանգ առնեմ մօրս միայն **ծիւն** (ձմեռ) արտասանութեան վրայ. այս արտասանութիւնը ո՛չ աշխարհաբար է, ո՛չ գրաբար. իր **«ի»** ձայնաւորով ան կը համապատասխանէ բառի նախահայերէնեան փուլին, ուր ան այդպէս կ'արտասանուէր 4-5 հազար տարի առաջ (տես Աճառեանի Արմատականը): Աղէկ, սակայն այս արտասանութիւնը ինչպէ՞ս անփոփոխ հասած է ծնողքիս բերանը՝ առանց ազդուելու գրաբարի, միջին հայերէնի ու աշխարհաբարի արտասանութիւններէն, որոնք տարբեր եղած են, եւ մնացած է միայն մե՛ր բարբառին մէջ, քանի Աճառեան կը թուէ **ձմեռ**-ի մօտաւորապէս 15 բարբառային արտասանութիւն, որոնցմէ ոչ մէկը «ի» ձայնաւորը կը բովանդակէ:

Չեմ գիտեր ու չեմ գիտեր Ահա յիշեալ «գիտելիքներով

Արեւի առաջին շողերուն հետ, Մանուկ՝ պարտեզի յատուկ լայնկեկ հագուստները հագած, գլխարկը գլխուն հագի երկու պատառ բերանը նետած, խաչակնքելէ ետք, ինքնաձայնով կ'ուղղուէր դէպի պարտեզ: -Պարտեզ պան ըսածդ արեւածագին հետ պէտք է իջնէ պարտեզ, զով օդին,- կ'ըսէր Մանուկ,- որպէսզի գործը ատենին վերջացնէ, օդը չտաքցած: Այս գարնան առաջին օրն էր, որ պարտեզ կ'իջնէր: Պարտեզի գործերը սկսաւ «գորդելով»: Քեսապի ձմեռը շատ երկար էր այս տարի ու կարծես անարտելու ալ միտք չուներ: Հագի հաւաքեր իր զաւակները՝ անձրեւը, պաղը, հովն ու մութ ամպերը իրա՞ծ էր կու տար, բայց բաժանումը դժուար էր, քիչ մըն ալ մնամ կ'ըսէր, ու նորէն պաղն ու անձրեւը կը սկսէին: Գարունը այս տարի կռուելով, դժուարութեամբ յաղթած էր ձմրան, ու իր տաքուն կարեւորած էր սիրտը Մանուկին, որուն համբերութիւնը հատած էր արդէն: Պարտեզի գործերը կու տակուած էին ու աչքին առջեւ կը տողանցէին ծառերը յօտելու, դեղելու, հողը հերկելու, դեռ փլած պատերը վերստին պատելու գործերը... սակայն եկուր տես, որ պաղն ու անձրեւը իրեն շունչ չէին տուած: Ան տան պատուհանէն ծառերը կը դիտէր ու մտքին մէջ գործերը կը դասաւորէր, բայց այդ դասաւորումները մտքին մէջ կը մնային, քանի որ կլիման չէր օգնէր իրեն: Համբերելէ գտնուող ճար չունէր, «խորհորդ մարդկանց, կամքն Աստուծոյ» կ'ըսէր միշտ ու ինքզինք կը համոզէր: Աշխոյժ քայլերով, ժպիտը դեմքին մօտեցաւ պարտեզի վերջին ծառին եւ սկսաւ յօտել: Գործը դանդաղ կ'ընթանար: Մարմինը քարացած ու ծլացած էր, ձեռքը աշխատանքի վարժութիւնը կորսնցուցած էր: Քիչ մը ժամանակի կը կարօտի, որ մարմինի ու ձեռքի ճկունութիւնը վերագտնէ ու ձմեռուան ծուլութիւնը թօթափէ, բայց տրամադրութիւնը շատ բարձր էր, կարօտցած էր իր պարտեզին, ծառերուն, հողին եւ աշնքին, հաճոյքով կ'աշխատէր: - Ձեռքերդ միշտ դալար թող մնան, *խելի՞* տարի մը ըլլայ, անփորձանք տարի մը: Մանուշն էր, Մանուկին կինը, այս բարեմաղթութիւնները արտասանողը: - Լեզուիդ դալար, Մանու՛շ, միասնաբար, քու ալ ձեռքերդ դալար

ԵՐԲ ԾԱՌԵՐԸ ԿԸ ՅՕՏՈՒԻՆ...



Սեան Ա. Մանճիկեան

թող մնան, առողջութեամբ հասնիլք բերքահաւաքին:

Մանուշ քիչ մը ուշ իջած էր պարտեզ, տան գործերն ու ճաշը դասաւորելէն ետք: Մանուշ երբ պարտեզ իջաւ, արեւը բարձրացած էր հորիզոնին վրայ ու իր հաճելի ջերմութիւնը աստիճանաբար կոր-



տուած: Ան ծառերը յօտել չէր գիտեր, բայց յօտուած ծառերուն ոստերը կը հաւաքէր: Այդ գործն ալ կարելոր աշխատանք մըն էր ծառերը յօտելու չափ:

Մանուկ ու Մանուշ քանի մը տասնեակ տարիներ ապրած էին յարգանքով ու սիրով, մերթ ընդ մերթ տարակարծութիւններ ունեցած էին անշուշտ, բայց մէկն ու մէկը անպայման խելքը մեծցուցած էր՝ իրենց ընտանիքի երջանկութիւնը չխաթարելու համար: Մանուկ կ'ըսէր.

- Ի՞նչ կ'արժէ աս կարճ կեանքը, ուրախ ապրիլք, սիրով ապրիլք, օրերը մեր ձեռքէն չսահած աւագի հատիկներու նման:

Իսկ Մանուշ կ'ըսէր.

- Աս ալ կ'անցնի, բան չկայ, որ այդքան արժէ այս կեանքին մէջ:

Ու այդպէս անոնք կեանքի բոլոր դժուարութիւնները համբերութեամբ կը շրջանցէին:

- Գիտե՞ս, Մանու՛կ, այս տարի մեր նստասենեակն ու խոհանոցը *պատանայ*՝ մը կ'ուզեն անպայման: Անցեալ տարի պէտք էր ընէինք, կարգը չհասաւ անոնց, իսկ տիւաններու երեսներն ալ, պատառի-չպատառելու վիճակին մէջ են:

- Հը՛, ի՞նչ կ'ըսես, չեմ լսեր կկի՛կ, ձայնդ քիչ մը բարձրացուր:

- Որքան բարձրացնեմ, Մանու՛կ, քիչ մըն ալ բարձր խօսիմ, դրացիները կը լսեն, ծառերն ալ ականջ ունին:

Մանուկ ծառին ծայրը ելած, ծառերու պիտանի եւ անպիտանի ճիւղերուն վրայ կեղոնացուցած էր իր ուշադրութիւնը: Իսկ Մանուշ գետին ծած մէկ կողմ ճիւղերը կը հաւաքէր, միւս կողմէ միտքը կը սաւառներ ճաշին, տան պէտքերուն,

Շար.՝ Էջ 6

- 1.- Գրդէլ- ծառին աւելորդ ճիւղերը կտրել (յօտել)
- 2.- Խելիլ- բարբեր
- 3.- Պատանա- ներկ

Աշակերտական Անկիւն

Պսակածել Ժաիրը Եւ Մենք

ՄԵՐ ՍԵՐՈՒՆԴԸ



Աստղիկ Դանիելեան

«Այս սերունդը փորձառու չէ»: Բաւական ատենն է Վեր կը մտածեմ այս գրպարտութեան մասին: Այսօր մենք կ'ապրինք 21-րդ դարուն, այսինքն արհեստագիտութեան դարաշրջանին: Ծատ բնական է որ հետեւիք համացանցային աշխարհին եւ երկար ժամեր յատկացնենք անոր: Այդ բոլորը չեն նշանակեր, որ մենք փորձառու չենք, կամ գիտակցութիւն չունինք: Այո՛, ժամանակը շատ մեծ դեր ունի, տարուէ տարի ամէն բան կը սկսի փոխուիլ՝ մարդիկ, իրենց մտածելակերպը, ժամանակը: Մեր ժամանակն ալ ներկան է:



Կեանքը, պայմանները, բոլորն ալ մեծ դեր ունին մեր առօրեային մէջ: Մենք ալ շատ բան տեսանք՝ անգթութիւն, անարդարութիւն եւ այլ դժբախտութիւններ... Այս բոլորը ազդեցին մեր մտածելակերպին ու բնաւորութեան վրայ: Թե՛ պատերազմը, թե՛ համաճարակը հոգեկան եւ ֆիզիքական մեծ ազդեցութիւն գործեցին մեր վրայ:

Բոլորս ալ ունինք մտահոգութիւններ եւ տեսակ-տեսակ մտածումներ: Օրինակ՝ մեզի համար մեծ հարց է, թէ ներկայ պայմաններուն մէջ ինչպէ՛ս պիտի կարենանք մեր նպատակները հետապնդել եւ գանոնք իրականացնել: Մեր սերունդը, որ յաճախակի քննադատութեան կ'ենթարկուի, այսօր գրկուած է իր ամենէն պարզ իրաւունքներէն: Բայց հակառակ մեր բոլոր տեսածներուն, մենք մնացինք գօրաւոր: Այդ բոլոր դժուարութիւնները յաղթահարեցինք ձեռք-ձեռքի տալով: Երբ այսօր կը տեսնենք ու կը լսենք, թէ ինչպէ՛ս քիչ մը ամէն կողմ, դժբախտաբար նաեւ մեր հայրենիքին մէջ, ատելութիւն կը սերմանուի, ոչ ոք իրաւունք ունի մեզ քննադատելու: Մեր յանցանքը չէ, որ շատեր չկրցան մեզի համար լաւ օրինակ դառնալ:

Ուստի մենք պիտի փորձենք միշտ մեր լաւագոյնը ընել՝ փաստելով բոլորին, որ մեր սերունդը որքան համբերատար եւ գօրաւոր է:

Քեսայի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծննդարան ԺՎ. Կարգ

ՊԱՏԵՐԱԶՍ ԵՒ ԶՈՒՐԻ ՏԱԳՆԱՊ



Արինա Պօշկեղենեան

Մարդ արարածին համար դիւրին ձեռք բերուած կամ իր տրամադրութեան տակ առատ եղած որեւէ բան կ'արժեւորուի միայն այն ատեն, երբ գայն կորսնցնէ կամ կորսնցնելու վտանգին տակ ըլլայ:

Այս իրականութիւնը հաստատեցինք 2012-ին, երբ մեր քաղաքը մտաւ պատերազմական վիճակի մէջ եւ ջուրի տագնապ ունեցանք: Մեզի համար ջուրը կենսական էր, բայց անոր ապահովումը մտահոգութիւն չէր եղած երբեք, որովհետեւ մենք առատօրէն եւ շնայութեամբ ջուր կ'օգտագործեինք, առանց որեւէ խնայողութեան:



Պատերազմի շրջանին ամէն բան սահմանափակուեցաւ, դիմացանք, սակայն ամէնէն տագնապալին ջուրի հայթայթման սահմանափակումն էր:

Զուրին տագնապը անել կացութեան մատուց բոլորս, ուստի պետութիւնը ժողովուրդին կենսական ջրամատակարարումը ապահովելու համար ջրհորներ փորել տուաւ: Սակայն հարցը բոլորովին չլուծուեցաւ: Բնակչութիւնը ջրհորներէն ջուրը բնակարաններ փոխադրելու համար մեծ դժուարութեան հանդիպեցաւ, օգտագործեց կառքեր, հեծակիւներ, որոնք վրայ տեղադրուած մեծակ կառքերէն մէջ լեցուց ջուրը, հոնկէ տանիք փոխադրելու գայն: Ոմանք տակառներ կամ շիշեր լեցնելով ամէն օր ջուր կրեցին: ՄԵՄ-ի նուիրեալ մեր տղաքն ալ անձնական իրենց մեքենաներով տարեցներուն կամ դժուարութիւններ ունեցողներուն յատուկ ջրամբարներով ջուր հասցուցին: Դպրոցները, եկեղեցիներն ու ակումբները իրենց դռները բացին ջրամատակարարման համար, իսկ օրական դրութեամբ ըմպելի ջուր գնելով՝ հալէպահայուն տնտեսական արդէն իսկ ծանր բեռը անտանելի դարձաւ:

Այսքանը արտատնային դժուարութիւններ էին, ունեցանք նաեւ տնային դժուարութիւններ: Օրինակ՝ քանի մը կաթիլ ջուրով պէտք էր բաւարարուէինք լուացուելու համար, մէկ դոյլ ջուրով պէտք էր լոգանք առնէինք եւ այդ ջուրը մաքրութեան յատկացնէինք եւ այլն:

Թեւեւ այս բոլոր տագնապներէն անցանք, սակայն սորվեցանք նաեւ ամէն ինչ արժեւորել եւ ամէն բան խնայողութեամբ գործածել:

Ազգ. Զարեմ Եփփէ Ծննդարան Թ Կարգ

ՃԳՆԱԺԱՄԵՐԸ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՒՆ ԿԸ ՄՏԵՂԾԵՆ



Սաֆօ Խայրեան


Ո՞վ գո՞վ փոխեց: Յաճախ մտքիս մէջ ծագող հարցում մը, որ ինքզինք կը պարտադրէ այս օրերուն:

Քանի մը ամիսէ արդէն ամբողջ աշխարհը կը տառապի ահռելի համաճարակէ, որմէ տակաւին չկրցաւ ձերբազատիլ մարդկութիւնը:

Այս ժաիրը շատ բան փոխեց մեր առօրեային եւ ապրելակերպին մէջ: Արդեօք պիտի սպասեինք համաճարակի մը, որպէսզի ան մեզի «սորվեցներ» մաքուր ապրիլը, առցանց աշխարհին հետ մեր կապերը ամրապնդելը: Ա՞ն պիտի սորվեցներ մեզի, թէ անհրաժեշտ է իրարու անձ-

դիկ սկսան անելի մեծ համամատուրթեամբ ուտել բանջարեղէն եւ պտուղ, որովհետեւ վերջապէս համոզուեցան, որ այդպիսի սննդեղէնը պիտի գօրացնէ իրենց մարմինին դիմադրողականութիւնը:

Ըստ երեւոյթի ճգնաժամերը կարելիութիւն կը ստեղծեն նաեւ: Այս պարագային, մարդիկ մասամբ մը ձերբազատուելով իրենց առօրեայ հեքուտ աշխատանքի ճնշումներէն, սկսան տունէն, անելի հանգիստ պայմաններու մէջ աշխատիլ, ժողովներու մասնակցիլ եւ այլն: Ընտանեկան երեկոները վերաշխու-



նական տարածքը յարգել եւ չփաթթուիլ, չհամբուրուիլ անպայման ամէն իրար հանդիպելու: Պսակածել ժաիրը պիտի յիշեցներ ճաշարանատէրերուն անելի մաքուր աշխատիլ, մարզական կեդրոնները մաքուր եւ հականեխուած պահել, բրքետոցի պարագային մեր ձեռքը բերնին տանիլ, ապա լուացուիլ եւ այլն ... շարքը շատ երկար է կենցաղային այն արարքներուն, զորս կիրարկելու համար կարիք չունինք սպասելու աշխարհի ամէնէն մանր եւ աներեւելի ժաիրին գալուստին:

Աւելին. երկրագունդն ալ պահ մը գեղծ մնաց մարդ արարածին յառաջացուցած աղմուկէն եւ արտադրած վնասակար կիւրերէն:

Մարդիկ, ներառեալ երիտասարդները, սկսան անելի ուշադրութիւն դարձնել իրենց առողջութեան եւ ընդգծել տարբերութիւնը առողջ եւ վնասակար սովորութիւններուն, որոնք անմիջականօրէն կ'ազդեն իրենց առողջութեան վրայ: Անոնք հասկցան վերջապէս, որ անհանգստանալու պարագային, ապաքինումը միայն բժիշկին օգնութեամբ կարելի կը դառնայ, ոչ թէ պատահական, դրացիին կամ ընկերոջ օգտագործած, դեղերը կու տալով: Մարդիկ սկսան ուշադրութիւն դարձնել իրենց սնունդին, հագուստին, տան եւ գիրենք շրջապատող ամէն բանի մաքրութեան: Ուտելու սովորութիւններն ալ փոխուեցան՝ համապատասխան դառնալով առողջապահական պայմաններուն: Մար-

ժացան, հաճելի եւ գուարճալի յարաբերութիւնը վերականգնեցաւ ընտանիքի բոլոր անդամներուն միջեւ՝ խաղեր, հաճելի գրոյցներ, որոնք երկար ատենէ ի վեր անտեսուած էին ընտանիքի անդամներուն կողմէ:

Այս բոլորի բովին մէջ այլ դրական սովորութիւն մըն ալ կեանք առաւ: Ենթադրեցիք չե՞ք, որ խօսքս ընթերցանութեան մասին է: Գիրքը վերստին նուաճեց իր բնական տեղը՝ մարդոց ձեռքերուն մէջ, դուրս գալով պահարաններու դարաններէն:

Յետաքրքրական երեւոյթ մըն ալ թափ առաւ առական սեռին համար: Թեւեւ ոչ միայն դիւրին փափաք կը յայտնէին օժանդակելու իգական սեռին տան գործերուն մէջ, սակայն, եկուր տես որ ժամանակ չէին գտներ... Համաճարակը ստեղծեց ու հաստատեց այդ ժամանակը, իսկ տղամարդիկ տնային գործերու մէջ ակնառու, նախանձելի յաջողութիւններու կրցան հասնիլ: Հազար ապրիք, տղա՛ք: Անշուշտ իգական սեռին դերը երբեք չենք կրնար ուրանալ, մեր մտքին մէջ միշտ կը շրջի այս առաքելութեան ժամանակաւոր բեռ մը ըլլալու ողիսականը: Չենք ջանար նուազեցնել որեւէ մէկ ձեռով:

Այս դժուար օրերն ալ պիտի անցնին: Յուսանք, ուրեմն, որ գեղեցիկ եւ լաւ սովորութիւնները, որոնք մուտք գործեցին մեր առօրեայէն ներս, առյաւետ մնան մեզի հետ ու համաճարակի թոհուրոհին մէջ յուշարար լոյսի մը նշոյլը ընդգծեն:

Խաճանկար

ԵՐՁԱՆԿՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ
Թեև այս շաբաթ սիրային կեանքի մեջ յուսախաբուրթիս պիտի ապրիք, այնուամենայնիս իրականության հետ պիտի հաշտուիք եւ ըստ այնմ շարունակեք ձեր կեանքը:

ՑՈՒԼ
Խոստումներ մի՛ տաք այս շաբաթ, որովհետեւ կացույթիւնը ինչպես ձեզի չէ: Խոհեմաբար մտածել էտք խօսեցեք կարելու որոշումներու մասին:

ԵՐԿՈՒՐԵԱԿ
Շատ մտածկոտ էք այս շաբաթ: Ձեզի կը թուի, որ աշխարհի ողջ բեռը ձեր ուսերուն է:

ԽԵՅՁԵՏԻՆ
Բանբասանքներու ականջ մի՛ տաք, որովհետեւ անոնք պիտի խանգարեն ձեզ: Ձեր գործերուն երկար ժամանակ յատկացուցեք:

ԱՌԻՇ
Ուրախ եւ բարեբեր շաբաթ է: Օգտուեցեք առիթէն եւ սոր ծրագիրներ կեանքի կոչեցեք:

ԿՈՅՍ
Յաջողութեան ճամբան բաց է ձեր դիմաց, ձեզի կը մնայ ճիշդ քայլերով ընթանալ առաջ եւ գտնել երջանկութեան բանալին:

ԿԵՒՈՔ
Միութենական տիպ կացութիւններու դէմ յանդիման պիտի գտնուիք այս շաբաթ: Խուսափեցեք վեճերէ եւ բախումներէ՝ փորձելով հասկացողութեամբ եւ մեղմութեամբ լուծել հարցերը:

ԿԱՐԻՃ
Կեանքի դպրոցը ձեզ վարժ կը դարձնէ հիասթափութիւնները դիւրաւ յաղթահարելու, ուստի վստահեցեք ձեր սեփական ուժերուն եւ մեծ յոյսեր մի՛ կապեք բարեկամներու օգնութեան:

ԱՂԵՂԱՍՈՐ
Դուք ճկուն յարաբերութիւններ մշակելու հմտութիւն ունիք: Այս շաբաթ խոհեմութեամբ պիտի կարենաք փրկել մտերիմ մը այլոց հիւսած դաւերէն:

ԱՅՅԵՂԶԻՐ
Ձեր ընտանիքի անդամները կը փորձեն իրենց առաւելագոյնը ընել ձեզ գոհացնելու եւ ձեր առօրեան դիւրացնելու համար: Ապերախտ մի՛ ըլլաք, անոնցմէ իրենց կարելիէն անելի մի՛ պահանջեք:

ՋՐՈՍ
Այս շաբաթ հեղուտ աշխատանքի շաբաթ է: Մերթ ընդ մերթ հանգիստ ըրեք, որպէսզի դասաւորուած աշխատիք:

ՁՈՒԿ
Գաղտնապահ եղէք: Բարի սիրտ ունեցողները յաճախ կ'օգտագործուին նենգամիտ մարդոց կողմէ:

Ամեն մարդ կը ձգտի ապրիլ խաղաղ եւ երջանկի: Յատկապէս երջանկութեան հասնելու համար յաճախ կը դիմենք զանազան միջոցներու եւ կը հաւատանք տարբեր իրերու կամ անձերու ազդեցութեան: Եկէ՛ք պահ մը չհաւատանք բախտին եւ լսենք, թէ գիտութիւնը ի՞նչ կ'ըսէ երջանկութեան մասին:

Համացանցին վրայ կրնաք կարդալ զանազան խորհուրդներ երջանկութեան հասնելու համար, բայց խորհրդատուներուն մեծ մասը գաղափար անգամ կրնայ չունենալ, թէ ի՞նչ է երջանկութիւնը:

Ձեզի կը ներկայացնենք գիտական տեսակետ մը, որ կազմուած է հոգեբաններու կատարած հետազոտութիւններուն տուեալներով: Ամերիկացի կենսաբան, ջիդերու մասնագետ Ալեքս Բորայի կը թելադրէ հետեւեալները.

1- Եղէ՛ք երախտագետ: Դուք ձեզի հարցուցեք, թէ ի՞նչ բաներու համար շնորհակալ էք Աստուծոյ: Երախտագիտութեան զգացումը դրականորէն կ'ազդէ ուղեղին վրայ: Երախտագիտութեան զգացումը կ'աւելցնէ ճնշուածութեան դէմ պայքարող *փուլարոպոլի* արտադրութիւնը, ինչպէս նաեւ կը խթանէ *սերոթոնին* արտադրութիւնը՝ այսպիսով ուղեղը պահելով երջանկ տրամադրութեան մէջ:



2- Արտայայտեցէ՛ք ձեր բացասական զգացումները: Փորձեցէ՛ք հասկնալ ձեր տխրութեան ու բարկութեան պատճառները: Ինչու չէ՞ նաեւ խօսեցէ՛ք անոնց մասին, որովհետեւ խօսելով ձեր վիճակը կը թթեւնայ, իսկ տխրութեան կամ բարկութեան ազդեցութիւնը կը նուազի:

3- Եղէ՛ք հանդուրժող: Հանդուրժող ու ներողամիտ ըլլալը թեթեւութիւն կը բերէ ձեր կեանքին եւ ձեր հարցերը լուծուած կը թուին ըլլալ: Ներողամտութիւնը ամենէն անելի կը նպաստէ ձեր հոգեկան խաղաղութեան ու երջանկութեան:



4- Մերտ յարաբերութիւններ մշակեցեք: Մարդուն ուղեղը մերժուած ըլլալու զգացումէն նոյն-

քան ցաւ կը զգայ, որքան մարմնային վերքէն: Ուստի, հոգեկան ու մտային հաւասարակշռութիւն պահելու համար պետք է մշակել սերտ յարաբերութիւններ, ստեղծել մտերիմ բարեկամներու շրջանակ եւ մշտապէս անոնցմով շրջապատուիլ: Հայկական ասացուածքը կ'ըսէ՝ «Մի՛նակութիւնը միայն Աստուծոյ կը վայելէ»:



5- Եղէ՛ք առատածէն: Հոգեբաններ փաստած են, որ մարդ արարածը տալով շատ անելի մեծ երջանկութիւն կը զգայ, քան ստանալով: Պայման չէ, որ թանկարժէք իրեր սուրիւնք մեր սիրելիներուն, երբեմն պարզապէս օգնութեան ձեռք երկարելը կամ անուշ խօսքով սրտերը ամոքելը որքան դիմացինը, նոյնքան ալ մեզ կ'երջանկացնեն:

6- Հեռու մնացեք բացասական տրամադրութեամբ ապրող մարդոցմէ: Ձեր իւրաքանչիւր քայլը քննադատող, կամ ձեզ յաճախ նուաստացնող անձերէ կարելի եղածին չափ հեռու մնացեք, որով-



հետեւ անոնք պարզապէս ձեզ բացասական մթնոլորտի մէջ կ'ուզեն պահել ու խոչընդոտ կը հանդիսանան ձեր յաջողութեան եւ երջանկութեան:

7- Գի՛րք կարդացեք: Օրական որոշ ժամանակ մը յատկացուցեք գիրք մը ընթերցելու, հաճելի երաժշտութիւն ունկնդրելու եւ մարզանք ընելու: Այսպիսով դուք պիտի վանեք ձեզ տխրեցնող մտքերն ու հանգստանաք:

8- Առողջարար սննդականոնի հետեւեցէ՛ք: Խուսափեցեք իւրոտ, ոչ-սննդարար ուտելիքներէ: Առաւելաբար օգտագործեցեք բանջարեղէնով, քիչ քանակութեամբ միսով եւ ընդդէմով հարուստ կերակրատեսակները, ինչպէս նաեւ եղանակային պտղատեսակները:

Կեանքը լեցուն է դժուարութիւններով ու վերիվայրումներով, սակայն հասնելով ներքին խաղաղութեան ու շրջապատին հետ ներդաշնակութեան, կրնանք լաւագոյն ձեւով նաւարկել կեանքի ալիքներուն մէջ:



Ռաֆֆի Սիլահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- ՅԱՐԿԱՆ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ
- ՅԱՐԿԱՆ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ
- ՅԱՐԿԱՆ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ



- ԱՆԳԵՎ ԶԱՐՔՈՒՆ ԸՆԹԱԾՔԻՆ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ
- ԱՆԳԵՎ ԶԱՐՔՈՒՆ ԸՆԹԱԾՔԻՆ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- ԿԻՐԱԿԻ ՕՐ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԵՋ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ
- ԿԻՐԱԿԻ ՕՐ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԵՋ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՄԵԽԱՐԵԱՆ ԴԱՐՁԱՎ ԸՄԲԹՈՒՆ ԼԱՐԱԳՈՅ ԽԱՂԱՅՈՐԸ

Հայաստանի ֆուտբոլի հաւաքականի եւ Իտալիոյ Ռոմա խումբի կիսապաշտպան Յենրիկ Միխիթարեան դարձաւ Իտալիոյ ախոյեանութեան



31-րդ փուլի լաւագոյն խաղացողը: SofaScore-ը կազմեց Իտալիոյ առաջնութեան 31-րդ փուլի խորհրդական խաղացական հաւաքականի կազմը, որուն մաս կազմեց նաեւ Միխիթարեան:

Հայ մարզիկը ընտրուեցաւ նաեւ Փարմայի դէմ կայացած մրցումի լաւագոյն մարզիկը: Աւելցնենք, որ Իտալիոյ ֆուտբոլի առաջնութեան 31-րդ փուլին Ռոման Յոմի ողիմպիական մարզադաշտին մէջ հիւրընկալեց Փարման:

Առաջին կիսախաղին, Փարմա կատարեց կոլերուն բացումը, որմէ քանի մը վայրկեան ետք Միխիթարեան նշանակեց հաւասարութեան կոլը:

Երկրորդ կիսախաղին, Միխիթարեանի յաջող փոխանցումով, Վերթոն կրկնապատկեց արդիւնքը:

ՄԱՐՍԵՆՈ ՄԻՆԶԵՒ ՏԱՐԵՆՐՁԱՆԻ ԱՄԱՐՏ ՊԻՏԻ ԲԱՅԱԿԱՅԻ

Սպանիոյ մայրաքաղաքի խումբի՝ Ռեալ Մատրիտի պաշտօնական էջին վրայ յիշուեցաւ, որ խումբի կիսապաշտպան պրագիլցի խաղացող Մարսելո փիրաւորուելուն պատճառով մինչեւ տարեշրջանի աւարտը պիտի բացակայի խումբի մրցումներէն:



Սպանական «Մարքա» օրաթերթը յայտնեց, որ խաղացող մէկ ամիս շարունակ պիտի ենթարկուի դարմանումի եւ մաս պիտի չկազմէ խումբի մնացեալ հանդիպումներուն: Մարսելո պիտի բացակայի Կարանատայի, Վիլա Ռեալի եւ Լեկանեսի հանդիպումներէն, եւ մեծ հաւանականութեամբ, 7 Օգոստոսին ներկայ պիտի ըլլայ Եւրոպայի ախոյեանական մրցումներուն Մանչեսթըր Սիթիի դէմ կայանալիք հանդիպումին:

Թիւ 16
Աւարտէ խաղը մէկ քայլով «ճերմակ քար»:

	e	q	յ	p	թ	յ	ճ	ւ	
8		♔	♚	♞					8
7			♖						7
6		♞							6
5									5
4									4
3		♖							3
2	♖								2
1				♔					1
	a	b	c	d	e	f	g	h	

Նախորդ Թիւի Պատասխանն է h 8 #
ՀԱՐԿԱՆ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

ՀԱՅՈՑ...

Սկիզբ՝ էջ 8

զինուած»՝ ամէն անգամ որ ուղղագրութիւն կ'ընէիք դպրոցը, ես կը յաջողէի պզտիկ վերլուծում մը կատարել ուսուցիչին արտասանութեան եւ իսկոյն կը գուշակէի, թէ ինչպէ՞ս պիտի գանազ անեմ անոր արտասանած **փ, ք, թ, ց** եւ **չ** բաղաձայնները, որոնք, անցնելով մօրս ձայնարանին մաղէն, ինծի յստակօրէն կը թելադրէին **բ** կամ **փ, գ** կամ **ք, դ** կամ **թ, ճ** կամ **ց, շ** կամ **չ** եւ այլն եւ որոնք գանազ անումը ընկերներու համար իսկական մղձաւանջ մըն էր, ինչպէս եւ Ե ներկայիս ալ բոլոր արեւմտահայ դպրոցականներուն եւ... չափահասներուն: Ընկերներս կը գարմանային, իսկ ուսուցիչներս անշուշտ մեծապէս կը գնահատէին «ուղղագրագիտութիւնս», մինչ ես շատ լաւ գիտէի... թէ այդ յաջողութիւնները իմ շնորհքիս արդիւնքը չէին, այլ կը պարտէի մօրս եւ մեծմօրս՝ երկու անգրաճանաչ գեղջուկներու արտասանութեան:

Եւ միակ չգարմացողը ես էի:

Չեմ գիտեր ինչո՞ւ, Հրաչեայ Աճառեան, որ այնքան բարբառներ սերտած է, ոչ մէկ ակնարկութիւն ըրած է մերինին: Գոնէ ինքս չեմ հանդիպած նման ակնարկութեան մը՝ ո՛չ Արմատական Բառարանի, ոչ ալ «Հայոց Լեզուի Պատմութիւն»ի մէջ, որոնք երկուքին ալ մօտէն ծանօթ եմ:


Իսկ այդ բարբառը այսօր գրեթէ այլեւս մոռցուած է:

Եթէ անցեալին, ծնողքիս ողջութեան, մէկ-մէկ կը հանդիպէի գայն խօսողներու, որոնք «հայրենակից» կը կոչուէին, հիմա այդպիսիներէն մնացող չկայ այլեւս: Չայն խոսողներէն այլեւս չեն մեր ընտանիքին անդամներէն ոչ մէկն ալ:

Կը մնայ որ ե՛ս խօսիմ գայն:

Այս ընել կարենալու համար՝ պէտք է որ բոլորովին առանձնանամ, փակեմ աչքերս ու ականջներս ալ, ու մտով վերականգնեմ մօրս պատկերը ու... գրուցեմ հետը:

Այլապէս, առանց անոր մտապատկերին, որ է՝ առանց անոր դէմքին նայելու, չեմ յաջողիր վերականգնել ինչիւնական այն համակարգը, որ յատուկ էր այդ բարբառին:



ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ Ս. ՍԱՀԱԿ-Ս.ՄԵՍՐՈՂ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՅԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԴԱՍԵՆԹԱՅԸ ՀԱՍԱԻ ԻՐ ԱԿՐՏԻՆ ՀՈԳԵԹՈՎ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՐԸ

Հովանավորությամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեչան Առաջնորդ Գերշ. Ս. Մասիս Սրբ. Եպս. Չաքարեանի, տնօրինությամբ Կրօնական Ժողովին եւ հսկողությամբ Կիրակնօրեայ Դպրոցներու ընդհ. տեսուչ Արժ. Տ. Չարեհ Զեյն. Չաքարեանին, անցնող ամսուան մէջ ընթացք առաւ Ս. Սահակ-Ս. Մեսրոպ Կիրակնօրեայ Դպրոցի ամառնային դասընթացը, Ազգ. Միացեալ Վարժարանի յարկէն ներս, շուրջ 167 աշակերտներու մասնակցութեամբ:

Աշակերտները իրենց ամառնային արձակուրդի ազատ ժամերը անցուցին Հայաստանեայց Առաքե-

սավարն էր երեցկին Սեդա Շաքարեան-Չերենցեան: Խուճաբ մը աշակերտներ բացման խօսքին ընդմէջէն ամփոփ կերպով արտայայտեցին Կիրակնօրեայ Դպրոցի ամառնային դասընթացքին իրենց անցուցած օրերուն մասին եւ շնորհակալական խօսքեր ուղղեցին՝ Առաջնորդ Սրբազան Հօր, քահանայ հայրերուն եւ ուսուցչուհիներուն: Աշակերտները հոգեպարար կերպով յաջորդաբար

երախտագիտական եւ շնորհակալական խօսք ուղղելով Առաջնորդ Սրբազան Հօր եւ Կրօնական Ժողովի քահանայ հայրերուն իրենց յարատեւ քաջալերանքին համար: Բա-

Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտները ուղղել Աստուածաշունչը ընթերցելու եւ Աստուծոյ տունը յաճախելու՝ լսելու համար Աստուծոյ խօսքը եւ հեռու մնալու աշխարհի խաբուսիկ երեւոյթներէն:

Առաջնորդ Սրբազան Հայրը բարձր գնահատեց Կիրակնօրեայ Դպրոցներու Ընդհ. Տեսուչ Արժ. Տ. Չարեհ Զեյն. Չաքարեանի եւ Կի-



լական Սուրբ Եկեղեցւոյ հարուստ ժառանգութենէն շարականներ եւ աղօթքներ սորվելով եւ Ամենակալին փառաբանելով: Հալեպահայութեան համար ուրախութիւն էր Երեքշաբթի օրերը Ս. Աստուածածին

ներկայացուցին «Աստուածածին Երկնային», «Աղօթելը Շնորհք Մընէ», «Ով Մեծ Պահապան» եւ «Ոսկեծղիկ» երգերը, սուրբ գրային ոսկի համարներ, Սաղմոս 121-ը, Սուրբ Հոգիի պտուղները եւ ամէնօր-



ելեղեցւոյ եւ Սրբ. Բառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ մէջ տեսնել մեր փոքրիկներուն մեծաթիւ մասնակցութիւնը Սուրբ եւ Անմահ Պատարագին:

Արդարեւ, Երեքշաբթի 7 Յուլիս 2020-ին, Կիրակնօրեայ Դպրոցի սաները իրենց մասնակցութիւնը բերին Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. եւ Անմահ Պատարագին, որմէ ետք եկեղեցւոյ ներքնասրահէն ներս տեղի ունեցաւ Կիրակնօրեայ Դպրոցի ամառնային դասընթացքի փակման հանդիսութիւնը, ներկայութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, արժանապատիւ քահանայ հայրերուն, Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտներուն եւ իրենց ծնողներուն:

Աշակերտները ներկայացուցին հոգեւոր բնոյթի գեղարուեստական կոկիկ յայտագիր: Օրուան հանդի-

եայ փունջ մը աղօթքներ՝ առաւօտեան, կէսօրուան եւ քննալէ առաջուան:

Կարճ ժամանակի մէջ քահանայ հօր եւ օրդ. Լուսիա Պանտաքի ջանքերով կազմուած աշակերտական նուագախումբը տպաւորիչ կատարումով ներկայացուց «Տէր Ողորմեա»-ն: Աշակերտները «Ի Վեհ Բարձանց Սուրբ Սիոնի» հայրապետական մաղթերգը երգելով իրենց երախտագիտութիւնը յայտնեցին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, շնորհաւորելով նորին սրբութեան գահակալութեան 25-ամեակը:

Կիրակնօրեայ Դպրոցներու ընդհ. տեսուչ Արժ. Տ. Չարեհ Զեյն. Չաքարեան խօսք առնելով Կիրակնօրեայ Դպրոցի մեծ ընտանիքին հոգեւոր ցնծութիւնը արտայայտեց,



հանայ հայրը շնորհակալութիւն յայտնեց սաեւ Ազգ. Միացեալ վարժարանի Հոգաբարձութեան եւ Տնօրէնութեան, բարեսիրական հաստատութիւններուն, կամաւոր ուսուցչական կազմին, երաժշտութեան ուսուցչուհիին եւ ծնողներուն: Տէր Չարեհ մաղթեց, որ Կիրակնօրեայ Դպրոցի աւարտին ծնողները շարունակեն իրենց գաւակները դէպի եկեղեցի առաջնորդէն, որպէսզի Կիրակնօրեայ Դպրոցէն

բարձրացնելով առ Աստուած օրինեց սուրիական հայրենիքը եւ անոր մէջ գործող մեր ազգային-եկեղեցական կառոյցները, մեր ծնողները, երիտասարդները եւ նոր սերունդի գաւակները:

Աւարտին, սրբազան հայրը իր հայրական պատգամին ընդմէջէն ողջունեց մեծաթիւ ներկայութիւնը ծնողներուն, որոնք եկած էին Աստուծոյ ձայնը լսելու եւ Աստուծոյ պատգամով լիցքաւորուելու: Խօսքը ուղղելով փոքրիկներուն, իր հայրական յորդորները փոխանցեց անոնց մնալու հարազատ գաւակ-

բարձրացնելով առ Աստուած օրինեց սուրիական հայրենիքը եւ անոր մէջ գործող մեր ազգային-եկեղեցական կառոյցները, մեր ծնողները, երիտասարդները եւ նոր սերունդի գաւակները:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Կիլիկիա» մաղթերգով, ներկաներուն երգեցողութեամբ եւ աշակերտական նուագախումբի կատարողութեամբ:



ները Հայ Եկեղեցւոյ՝ Աստուծոյ պատգամներուն եւ մեր եկեղեցական ժառանգութիւններուն նկատմամբ նոյն հաւատարմութիւնը ունենալով:

Սրբազան հայրը կարեւորեց

Փոքրիկները հիւրասիրութիւն ստանալով իրենց տունները վերադարձան, վերամուտին դարձեալ Կիրակնօրեայ Դպրոցին շուրջ համախմբուելու յոյսով:

Մարինա Պողիկեան